5154

Шіркфуде

Ірімтір тілдеңпрусді
Шіркіфуде ұрыстар

176
Ш-49

Ер. 1925

29 JUL 2009

Բժ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՑԵՐԵՎԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

(ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

176
Մ-49

ԵՐԵՎԱՆ
1925

176
Ա-49

610
ՉՉ4-Մե

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ
ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

(ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Ս.Հ.Ա. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԵՐԵՎԱՆ
1925 թ.

27.06.2013

5154

Դրատ. № 219 բ. Տիրաժ 1000 Պատ. № 647
Տպագրական արհեստի 2-րդ տպարան, Յերևան։

ՀԱՌԱՋԱԲԱՆ

«Սեռական հարցի լուծման համար հարկավոր է իմանալ սեռական կյանքի պատճառները ու հետևանքները, հարկավոր է տալ այդ գիտությունը հետագա սերունդներին, վոր նրանք հասնեն իմաստության առանց զոհերի. ապա ուրեմն սեռական կրթությունը պետք է գրավի ընդհանուր մանկավարժության մեջ ամենահայտնի տեղը»։

ԷԼՈՒԽ

Մեզնում սեռական կրթության վրա հարկավոր ուշադրությունը չի դարձնվում, ասենք ավելին՝ ամենևին ուշադրություն չի դարձնվում։ Այս փոքրիկ մեր աշխատությունը գալիս է ասելու, վոր վաղուց հասունացել է այդ խնդիրը յեվ որ առաջ միջոցներ պետք է ձեռք առնվեն սեռական կրթությունը մտցնելու մանկավարժության մեջ, վորպեսզի յերիտասարդն արբունքի հասնելուց հետո ուղիղ ճանապարհով ընթանա, զեկավարվի գիտական իսկական հասկացողություններով յեվ չը տուժի ապագայում։

Վերջացնում ենք Հ. Թումանյանի խոսքերով.

«Ապրե՛ք, եբեխե՛,
Բայց մեզ պես չապրե՛ք»

Հեղինակ

29 հոկտեմբերի 1925 թ.
Յերևան

Բժ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Զեկուցված է Ցերեվանի Բժշկական Ընկերության նիստում։

Յուրաքանչյուր պետություն աշխատում է ունենալ ֆիզիկապես և բարոյապես առողջ քաղաքացիներ։ Բարոյական պակասությունները նույնպես վնասակար են, ինչպես և ֆիզիկականը։ Եթե արժանի է ուշադրության մեր յերիտասարդության կյանքի ֆիզիկական կողմը, ապա ուրեմն վոչ պակաս արժանի է ուշադրության մեր յերիտասարդության կյանքի նաև բարոյականը։

Բարոյական կրթության տեսակետից առաջնակարգ տեղ է բռնում սեռական կրթությունը, վորի վրա տարաբախտաբար մինչև այժմ շատ քիչ ուշադրություն է դարձրած։

Պետություններից Շվեդիան այդ հարցում առաջին տեղն է բռնում։ Շվեդիայում սեռական կրթության համար հատուկ մանկավարժներ և բժիշկներ կան։ Ռուսաստանում այդ հարցը ամենացավոտ հարցերից մեկն է. այդ պատճառով էլ ՍԽՀՄ-ի վեներաբանական յերկրորդ համագումարի կազմակերպիչ մարմինը համագումարի ծրագրային հարց է դարձրել սեռական կրթությունը, վորն առաջնակարգ դեր է խաղում վեներական սիфիլիսի դեմ մղվող պայքարի մեջ։

Հետաքրքրվելով Յերևանի ուսանողության սեռական կյանքով, մենք՝ վեներաբանական սեկցիայի կարգադրությամբ, համաձայն ՀՍԽՀ Առժողկոմատի ցանկության՝ կատարեցինք Յերևանի ուսանողության սեռական կյանքի ուսումնասիրության մի փո-

քրիկ փորձ, հիմնվելով ուսանողներից հավաքած թվական տվյալների վրա։

Սեռական կյանքի մասին ուսումնասիրություններ շատ կան արված, թե բժիշկների, թե բնագետների և թե գրականագետների կողմից. բայց այդ ուսումնասիրություններից շատերը թվական տվյալներ չունեն և կրում են իրենց վրա ուսումնասիրություն կատարողի անհատական—սուբյեկտիվ նշանները. այդ պատճառով մենք ընտրեցինք ուսումնասիրության յերկրորդ ճանապարհը՝ հիմնվել վիճակագրական տվյալների վրա, այսինքն՝ ստանալ խնդրին առարկայորեն— օբյեկտիվ կերպով։

Այս ուսումնասիրությունը չի պարփակում իր մեջ սեռական հարցն ամբողջովին, այլ տալիս է մեզ Յերևանի յերիտասարդության մի մասի սեռական կյանքի պատկերը՝ ինչպես և սկսվում սեռական ձգտումը, յերբ և հայտնվում, ինչ ազդեցություն և թողնում յերիտասարդի ֆիզիքականի և հոգեկանի վրա, ինչ հակազդեցություն և ցույց տալիս յերիտասարդը սեռական զգացմունքին, սկսած պատանեկան շրջանից մինչև լիակատար հասունությունը։ Այս մեր առաջին նպատակն եր, յերկրորդը՝ մաքառել սեռական սանձարձակության դեմ, իսկ յերրորդը՝ հարուցել Հայաստանում սեռական կրթության խնդիրը։

Ի հարկ է, մեր այս աշխատությունը ունի շատ թերություններ, բայց սա մի փորձ է և այն ել առաջինը։ Պետք է ասեմ և այն, որ թերությունների մեծ մասի պատճառն այն եր, որ զանազան շրջաններում տարբեր ընդունելություն գտավ սեռական կյանքի մասին մեր կազմած հարցման թերթը։ Այս վերջինը միայն Աժողկոմատի հավանությունը գտավ. չթույլատրվեց տարածել այդ թերթը կոմյերիտասարդության և բարձր դասարանների աշակերտության մեջ. իսկ քաղքենիությունը միանգամայն բացասաբար վերաբերվեց այդ տեսակ ուսումնասիրությանը։ Բացասաբար վերաբերվողները պատճառ եյին բերում, որ այդ տեսակ փոփուկ խնդրում մեծ զգուշություն և հարկավոր՝ գործին ավելի չվնասելու համար։ Այդ տեսակ վերաբերմունքն, ակնհայտ և, անդրադարձավ պատասխան տվող յերիտասարդների վրա և նրանցից 50 տոկոսը վոչինչ չպատասխանեց, մանավանդ վեներական ախտով բռնված յերիտասարդները։ Պատասխանողներից գրեթե 99 տոկոսը վերաբերվել է հարցին լուրջ և ճշգրիտ պատասխաններ և տվել, մինչև անգամ թերթի տակին շատերը նկատողություն են գրել, որ աղնվությամբ պատասխանել են

բոլոր հարցերին ճիշտը, առանց թաքցնելու, վորովհետև ի նկատի յեն ունեցել հարցի թե գիտական և թե պետական նշանակությունը։

Սեռական սանձարձակությունը չափից անցնում է։ Սեռական անբնական կյանքով ապրում են վոչ միայն հասունացածները, այլ և պատանիները, գնալ ավելի հեռուն, մինչև անգամ և մանուկները։ Ահա այդ վաղաժամ սեռական կյանքի դեմ պետք է պայքար մղել. անկանոն ու անկարգ սեռական կյանքի դեմ պետք է կռիվ մղել և պետք է մղել այն՝ կազմակերպված ու լավ զինված։ Վոչ մի պայքար առանց ուսումնասիրության հաջողություն չի ունենա։ Անհաջող և թերի փորձերը չպետք է վհատեցնեն մեզ։

Չնայած այս մեր առաջին փորձի թերություններին՝ բայց և այնպես ստացված տեղեկությունները մեզ համար պարզ և վորոշակի արտահայտում են մեր յերիտասարդության սեռական կյանքը։ Այդ պատասխանների մեջ պարզ արտացոլվում են մեր յերիտասարդության անբնական սեռական կյանքի պայմանները։ Թույլ դաստիարակությունը մի կողմից, արտաքին աշխարհի վատ ազդեցությունը մյուս կողմից, ընկերներ, գրականություն, թատրոն, կինո՝ յերրորդ կողմից—այս բոլորը արհեստական կերպով վաղ զարթեցնում են սեռական զգացմունքը, պահում են յերիտասարդի սեռական գործարանները լարված դրության մեջ, իսկ այս բոլորի հետևանքն այն է լինում, վոր յերիտասարդը, վորի ուղեղի զսպիչ կենտրոնները դեռ չեն զարգացած ու չեն գործում, անում է սխալ քայլեր, շեղվում է ուղիղ ճանապարհից և, թեք ուղղություն բռնելով, գլորվում է ցած։

Անցնենք հարցման թերթին։

Այս վերջինը կազմելիս մենք ոգտվել ենք Մոսկվայի ուսանողների մեջ տարածված Գելմանի կազմած թերթից, փոխելով մի քանի հարցեր և ավելացնելով ուրիշները, վորոնք համապատասխանում են մեր պայմաններին։ Հարցման թերթը միատեսակ է թե տղամարդկանց և թե կանանց համար, միայն թերթի վերջում հատկապես կանանց համար ավելացրած է տասը հարց։ Բոլոր հարցերի թիվը 50 է։ Թերթերից տպված եր 3000 որինակ, վորոնցից տարածված է միայն մոտ հազար հարյուր որինակ։

Այդ թերթերը ցրված են և պատասխաններն ստացված են հետևյալ 5 հիմնարկության ուսանողներից։ 1) Ռազմաքաղաքական դպրոց 46 անձ. 2) Հրամանատարական դպրոց 55 անձ. 3) Մանկավարժական ինստիտուտ 23 անձ, վորոնցից ութը կին. 4) Բանֆակ 189 անձ, վորոնցից 24-ը կին և 5) Պետական համալսարան

249 անձ, վորոնցից 43-ը կին։ Ընդամենը 562 անձ, վորոնցից 75-ը կին։ Հարցաթերթ ստացողներից 50 տոկոսը պատասխանել է։

Առաջին աղյուսակը ցույց է տալիս մեզ պատասխան տվողների սեռը և տարիքը՝

1-ին աղյուսակ

Տարիք	Լոմբրոզոյի դպրոցից	Հրաժարված դպրոցից	Մանկավարժական ինստիտուտում		Բանվոր		Գեղջուկ հասարակության մեջ		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար	իգ.	
17	—	—	—	—	10	2	1	2	15
18	1	3	—	—	25	3	6	8	46
19	6	1	—	—	18	5	19	8	57
20	4	7	—	—	21	5	22	6	65
21	10	4	1	—	9	—	22	5	51
22	17	9	2	3	15	2	32	5	85
23	3	15	2	1	14	3	31	4	73
24	3	7	1	1	15	—	21	3	51
25	1	5	1	1	9	2	12	—	31
26	1	1	1	1	9	—	13	—	26
27	—	2	2	1	2	1	5	1	14
28	—	—	—	—	2	1	7	1	11
29	—	—	2	—	4	—	5	—	11
30	—	—	1	—	2	—	2	—	5
31	—	—	—	—	—	—	1	—	1
32	—	—	—	—	2	—	1	—	3
33	—	—	—	—	1	—	1	—	2
34	—	1	2	—	1	—	—	—	4
35	—	—	—	—	1	—	2	—	3
36	—	—	—	—	1	—	—	—	1
37	—	—	—	—	1	—	—	—	1
38	—	—	—	—	—	—	1	—	1
39	—	—	—	—	1	—	—	—	1
40	—	—	—	—	2	—	—	—	2
41	—	—	—	—	—	—	1	—	1
	46	55	15	8	65	24	206	43	562

Այս աղյուսակը ցույց է տալիս. 1) պատասխանողները 562 հոգի յեն, վորոնցից 75 կին է. այսինքն 12,8 տոկոս. 2) պատասխանողները 17 տարեկանից մինչև 41 են. 3) ամենաշատը 19-20-21-22-23 և 24 տարեկաններ են, այսինքն մի հասակ, յերբ սեռական ցանկությունն իր գագաթնակետին է հասել. 19 տարեկան 57 հոգի, 20 տ. 65 հ., 21 տ. 51 հ., 22 տ. 85 հ., 23 տ. 73 հ. և 24 տարեկան 51 հ. դրանից հետո մեծ տարիք ունեցողների թիվը կամաց կամաց պակասում է։

19–24 տարեկան անձանց թիվը 382 է, այսինքն ամբողջի մոտավորապես 68 տոկոսը։ Այս հանգամանքի պատճառով նրանց տված պատասխանները՝ մեր դրած խնդրի տեսակետից՝ մեծ նշանակություն ունեն։ Վերը հիշած Դել'մանի կազմած թերթի մեջ պատասխան տվողների այդ տարիքի ուսանողները նույնպես մեծ թիվ են կազմում։ Ի հարկե, դրա պատճառը շատ հասկանալի յե. ուսման, բարձրագույն կրթության ամենաավելի հասակն է դա, վորը միևնույն ժամանակ, ինչպես վերը հիշեցի, սեռական կյանքի ամենայեռուն շրջանն է։

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս պատասխան տվող ուսանողների դասակարգային դրությունը, վորը նույնպես նշանակություն ունի սեռական հարցում։

2-րդ աղյուսակ

Դասակարգ	Լոմբրոզոյի դպրոցից	Հրաժարված դպրոցից	Մանկավարժական ինստիտուտում		Բանվոր		Գեղջուկ հասարակության		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Գյուղացիական .	38	35	14	4	81	5	100	6	283
Բանվորական . .	8	17	—	—	64	11	32	16	148
Մանր բուրժուական	—	—	1	3	20	8	69	17	118
Բուրժուական . .	—	3	—	1	—	—	5	4	13
Գումար . .	46	55	15	8	165	24	206	43	562

Այս աղյուսակը ցույց է տալիս մեզ, վոր պատասխանողների 50 տոկոսը պատկանում է գյուղացիական դասակարգին, վոր այդ անձինք իրենց մանկության և պատանեկության շրջանը

անց են կացրել գյուղացիական շրջանում. բանվորական դասակարգին պատկանում են 148 անձ, այսինքն մատավորապես 25 տոկոս։ Մանր բուրժուական դասակարգին պատկանող անձինք ևս պատկառելի տեղ են բռնում. նրանք 118 հ. են, վորը կազմում է 21,5 տոկոս. իսկ բուրժուական դասակարգին պատկանում են միայն 13 հ., այսինքն 2,1 տոկոսը։ Համալսարանի ուսանողները մանր բուրժուական և գյուղացիական դասակարգիցն են, իսկ բանֆակինը՝ գյուղացիական և բանվորական դասակարգից. այնպես վոր Բանֆակի տեղեկությունները բանվորագյուղացիական զանգվածից են ստացված։

Ինչ վերաբերում է կանանց, պետք է հիշատակել, վոր կանայք սովորում են Բանֆակում և Համալսարանում. կանանց մեծամասնությունը անց է կացրել իր մանկության և պատանեկության շրջանը բանվորական և մանր բուրժուական դասակարգի մեջ. դա շատ հասկանալի է, մեր գյուղացի աղջիկներն և կանայք դեռ այնքան ուսում և պատրաստություն չունեն, վոր գան քաղաք և մտնեն բարձր դպրոցներ՝ կրթությունը շարունակելու համար։

Սեռական ձգման և առհասարակ սեռական գործունեության վրա մեծ ազդեցություն ունի ժառանգականությունը։ Այս վերջին հանգամանքը պարզելու համար դրված եր 4-րդ հարցը, այսինքն՝ ծնողներից վորն է յեղել հարբեցող, կամ հիվանդ սիֆիլիսով։ Պատասխանողների թիվը շատ աննշան է և սեռական գործունեության տեսակետից վոչինչ ցույց չի տալիս, բայց և այնպես հետաքրքրական է՝ թե վոր դասակարգի պատկանող ուսանողները հարբեցող ծնող են ունեցել։

Պատասխանները այսպես են՝ գյուղացիներ 24 հոգի, վորոնցից 2-ը ռազմաքաղաքական դպրոցից, 3-ը մանկավարժ. ինստ., 13-ը բանֆակից և 6-ը Պետական համալսարանից։ Բանվորական դասակարգից միայն Համալսարանի ուսանողներից են պատասխանել 4 հ., մանր բուրժ. դասակարգից 4 հ. համալսարանից. իսկ բուրժուական դասակարգից 1-ը համալսարանից։ Կանայք վոչինչ չեն պատասխանել։ Մնացած ուսանողները բոլորը գրել են «չգիտենք»։

Այս փոքր թվերից յերևում է, վոր գյուղացիք են հարբեցողները և տրված տեղեկություններից հայտնվում է, վոր պատասխանողների հայրն է յեղել հարբեցողը։ Սիֆիլիսի մասին բոլորն էլ գրել են՝ «չգիտենք»։

Պատասխանողների սոցիալական դրությունը պարզելու համար տրված է 5-րդ հարցը՝ զբաղմունք և քանի ժամ։

3-րդ աղյուսակ

Զբաղմունք	Բանվորական դպրոց	Հրամանատ. դպրոց	Մանկավարժ. ինստիտուտ.		Բանֆակ		Համալսարան		Ընդամենը
			արբ.	իգ.	արբ.	իգ.	արբ.	իգ.	
Խորհրդ. աշխ.	—	—	9	5	52	5	77	10	158
Ուսանող	46	55	6	3	13	9	123	30	285
Բանվոր	—	—	—	—	68	2	2	—	72
Գործազուրկ	—	—	—	—	29	4	4	3	40
Արհեստավոր	—	—	—	—	1	4	—	—	5
Զինվորական	—	—	—	—	2	—	—	—	2
Գումար	46	55	15	8	165	24	206	43	562

Այս աղյուսակը պարզ ցույց է տալիս, վոր պատասխանողների 50 տոկոսից ավելին ուսանողներ են, այսինքն՝ միայն սովորում են և ուրիշ զբաղմունք չունեն։ Պատասխանողներից մոտ 27,5 տոկոսը կազմում են խորհրդային աշխատավորները, 12,5 տոկոսը կազմում են բանվորները՝ վորոնք ուսանում են բացառապես բանֆակում. գործազուրկները կազմում են 7,5 տոկոս. իսկ արհեստավորներն ու զինվորականները շատ աննշան թիվ են կազմում։

Մի ուրիշ բան ևս աչքի է ընկնում այս աղյուսակից. Բանֆակում սովորում են խորհրդային աշխատավորներն և բանվորները, իսկ Համալսարանում՝ խորհրդային աշխատավորներն և ազատ անձինք, վորոնք բացի սովորելուց այլ զբաղմունք չունեն։ Սրանք մանր բուրժուական և գյուղացիական դասակարգին պատկանող անձինք են։

Քանի ժամ է տևում զբաղմունքը. Ռազմ.-քաղ. և հրամանատ. դպրոցներում պարապում են 8-10 ժամ. մանկավարժական ինստիտուտում՝ ազատ անձինք 6 ժամ. իսկ բանֆակում և պետական համալսարանում՝ խորհրդային աշխատավորները զբաղվում են 10-11 ժամ, վորից 6 ժամ պաշտոնատեղում, իսկ 5-6

ժամ և Բանֆակում կամ Համալսարանում։ Բանվորներն աշխատում են 12 ժամ, վորից 8 ժամ պաշտոնատեղում և 4 ժամ Բանֆակում։

Մյուս աղյուսակը ցույց է տալիս, թե պատասխանողներից ով ինչքան ժամանակ է սովորում։

4-րդ աղյուսակ

Վորքան ժամանակ է սովորում է	Դասախոսություններ	Գրավոր աշխատանքներ	Մանկավարժական ինստիտուտ		Բանֆակ		Համալսարան		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
6 ամիս	19	35	1	—	—	—	—	—	55
1 տարի	27	17	5	1	87	16	118	30	301
2 տարի	—	3	9	7	78	8	58	9	172
3 տարի	—	—	—	—	—	—	30	4	34

Այս աղյուսակից յերևում է, վոր պատասխանողների մեծ մասը 1-ին և 2-րդ տարվա ուսանողներ են։

Մյուս աղյուսակը վերաբերում է ընտանեկան դրությանը, այսինքն՝ ով է ամուրի և ով ամուսնացած։

5-րդ աղյուսակ.

Ընտանեկան դրություն	Դասախոսություններ	Գրավոր աշխատանքներ	Մանկավարժական ինստիտուտ		Բանֆակ		Համալսարան		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Ամուրի	41	44	12	6	132	15	184	39	473
Ամուսնացած . .	5	11	3	2	33	9	22	4	89
Գումար . .	46	55	15	8	165	24	206	43	562

Այս աղյուսակից յերևում է հետևյալը՝ պատասխանողներից 12,5 տոկոսը ամուսնացած են, իսկ մնացածը՝ ամուրի։

Բայց ավելի հետաքրքրականն այն հարցն է՝ թե ամուսնացողներից քանիսն են 25 տարեկանից բարձր ամուսնացել և քանիսը մինչև 25 տարեկան հասակը. այս հարցը նշանակություն ունի այն տեսակետից, վոր տղամարդը համարվում է 25 տարեկան հասակում լիակատար հասունացած, իսկ այդ տարիքից շուտ ամուսնությունը՝ պետք է վաղաժամ հաշվել։

Ահա և պատասխանը. ռազմաքաղաքական դպրոցի սաներից ամուսնացած են 5 հոգի և բոլորն էլ մինչև 25 տարեկան հասակն են ամուսնացել. հրամանատար. դպրոցի սաներից 6 հոգի (11-ից), այն է 60 տոկոս, վաղաժամ է ամուսնացել։ Մանկավարժական ինստիտուտի ուսանողներն ամուսնացել են 25 տարուց վեր. Բանֆակի 33 ամուսնացածներից 14-ն ամուսնացել է մինչև 25 տ. այսինքն 42,5 տոկոս, իսկ համալսարանի 22 հոգուց 5 հոգին է մինչև 25 տ. ամուսնացել, այսինքն՝ 22,7 տոկոս. կանայք բոլորն էլ ամուսնացել են մինչև 20 տարեկանը։

ՍԵՌԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔ

Անցնում ենք այժմ ամենահետաքրքրական հարցին՝ վոր հասակում յերևացին սեռական առաջին նշանները։ Այս հարցը բավական դժվարության մեջ է դրել պատասխանողներին. ինքն ըստինքյան հասկանալի յե. շատ դժվար է պարզել անցյալն ու վերհիշել՝ թե յերբ յերևացին սեռական առաջին նշանները. պետք է խոստովանել, վոր շատ քչերն են ի վիճակի անելու այդ։ Ի հարկե, պատասխանողների հասակում, յերբ անցկացած որերը շատ էլ հեռու չեն, պետք է այնքան էլ դժվար չլիներ տեղեկություն տալը, և իրոք, մեծամասնությունը լավ ըմբռնել է ու ճիշտ պատասխան տվել. բայց և այնպես պատասխանողներից 83 հոգի գրել են «չենք հիշում», դա պատկառելի թիվ է, վոր մոտավորապես 14 տոկոս է կազմում։

Ի՞նչ բան է սեռական զգացմունքը։ Յես ավելորդ եմ համարում յերկար կանգ առնել այդ հարցի պարզաբանման վրա. բայց և այնպես արժե մի յերկու խոսք ասել։ Սեռական զգացմունքը անդրադարձային գործողություն է, հատուկ է բոլոր կենդանի էակներին և կայանում է նրանում, վոր յուրաքանչյուր կենդանի հակազդեցություն է ցույց տալիս սեռական կենտրոնները գրգռող ներքին կամ արտաքին գործոններին։ Բավականանանք այս յերկու խոսքով և անցնենք պատասխաններին։

6-րդ աղյուսակ

Տարիք	Վաղամարդ.	Հրամատ.	Մանկա-վարժ.		Ֆանֆիկ		Հրամայ-ական		Ընդամենը
			ար.	իգ.	ար	իգ.	ար.	իգ.	
6	—	—	—	—	1	—	—	—	1
7	—	—	2	—	1	—	1	—	4
8	—	—	—	—	1	—	2	—	3
9	—	—	—	—	—	—	3	—	3
10	—	—	—	—	7	—	2	1	10
11	1	—	—	—	2	—	2	—	5
12	1	3	—	—	4	—	12	2	22
13	1	2	2	—	8	—	7	2	22
14	8	6	6	—	20	—	47	1	88
15	14	20	—	1	39	2	43	5	124
16	11	12	-	—	32	1	45	4	105
17	4	6	1	1	18	1	18	—	49
18	5	4	—	—	13	3	7	—	32
19	1	—	—	—	4	—	—	—	5
20	—	—	—	1	2	—	2	—	5
21	—	—	—	—	—	—	—	—	—
Չեն հիշում	—	2	4	5	12	17	15	28	83
Գումար	46	55	15	8	165	24	206	43	562

Պատասխանողներից միայն մեկ որիորդ, 18 տարեկան, գրել է, որ չի հասկանում՝ ինչ բան է սեռական առաջին նշանները, իսկ մյուս որիորդը գրել է, թե եղպես բան նա բնավ չունի, այս յերկուսին յես զետեղել եմ չհիշողների կարգին։

Մենք այս աղյուսակից նկատում ենք, որ կան անձինք, որոնց սեռական ձգտումը շատ վաղ է զարթնել. բնական զարգացումը 14-15 տարեկան հասակումն է լինում, ինչպես և պարզ յերևում է աղյուսակից 14 տ.՝ 88 անձ, 15 տ.՝ 124 անձ և 16 տարեկան՝ 105 անձ. 14 տարուց առաջ և 16 տարուց հետո աստիճանաբար իջնում է սեռական զգացմունքը։

Մեր աղյուսակի թվական տվյալները չեն համապատասխանում այն տարածված կարծիքին, թե հայերը պատկանում են այն

ցեղին, որի սեռական զգացմունքը զարթնում է վաղ՝ 11-12 տարեկան հասակում։

12-րդ դարի հայ մատենագիր Մխիթար Գոշի դատաստանագրքի մեջ ևս սեռական հասունության հասակը համարվում է 14 տարին. այնպես որ մեր ստացած պատասխանները համապատասխանում են 12-րդ դարում ընդունված հասակին։

Ինչպես վերն ասացինք, սեռական զգացմունքը անդրադարձային գործողություն է և կախումն ունի սեռական գործարանների զարգացումից. թե տղամարդի և թե կնոջ սեռական գործարանները պատկանում են ներզատող գեղձերի կարգին, այսինքն՝ բացի սեռական հյութից՝ տալիս են նաև մի այլ քիմիական հյութ, որը կոչվում է հորմոն։ Այս վերջինը շատ վաղ է սկսում իր գործունեությունը և, կապ ունենալով մյուս ներզատող գեղձերի արտադրած հյութի՝ հորմոնների հետ, բարդ ազդեցություն է թողնում կենդանի եակի վրա, որն արտաքուստ արտահայտվում է սեռերի զանազանությամբ, իսկ ներքուստ յերկու սեռի եյակների դեպի միմյանց ձգտումով։

Կենդանիների աշխարհում առհասարակ մարմնի ֆիզիքական զարգացման և սեռական գործարանների գործունեության մեջ քիչ թե շատ վորոշ չափով ներդաշնակություն կա. բայց պատահում են մարդիկ, որոնք զուրկ են ներդաշնակությունից՝ այսինքն սեռական գործարանների հորմոնները յերբեմն սկսում են իրենց ներգործությունը ավելի վաղ, քան ֆիզիքական կազմվածքի կազմակերպումը և, իբր հետևանք այդ անները դաշնակության, մենք տեսնում ենք որինակներ, յերբ սեռական ձգտումը հայտնվում է վոչ թե պատանեկան, այլ մինչև անգամ մանկական 6-7-8 տարեկան հասակում։

Ուշադրավ են հենց այդ վաղաժամ յերևան յեկած գեպքերը։

Թերթելով մեկ-մեկ բոլոր այն թերթերը, որոնց մեջ գրված են 11-12 տարեկան հասակը, մենք տեսնում ենք, որ գրանք մեծ մասամբ քաղաքում ապրած մանր-բուրժուական դասակարգին պատկանող անձինքն են, կամ գյուղացիական և բանվորական դասից են, բայց քաղաքումն են անց կացրել իրենց մանկական հասակը. գրանք 6-14 տարեկաններն են և կազմում են բոլոր պատասխանողների մոտավորապես 10 տոկոսը։

Սեռական զգացմունքի այդպես վաղ հայտնաբերվելն ունի, ի հարկ է, իր պատճառները, որոնց վրա կանգ առնելը մեզ շատ հեռու կտաներ, բացի այդ, դա մեր նպատակից դուրս է. մենք մի-

այն ավելորդ չենք համարում մի 2 խոսք ասել մեր կյանքի սոցիալական այն պայմանների մասին, վորոնք վորոշ չափով ազդակ են հանդիսանում սեռական զգացմունքի վաղ հայտնաբերվելուն։

Այստեղ ել, ինչպես ամենուրեք, տնտեսականին է պատկանում առաջին տեղը։ Տնտեսական սուղ պայմաններից ստիպված, ազգաբնակության մեծագույն մասն ապրում է մեկ մեկ սենյակում, վորտեղ ամբողջ օրն անց են կացնում յերեխաներն ու մեծերը միասին. մեծերի անզգույշ խոսակցությունը, հայհոյանքներն, անզգույշ շարժումները, ծնողների ամուսնական պարտականությունների կատարելը յերեխաների ներկայությամբ՝ այս բոլորն ստիպմանաբար ազդում են և թողնում են իրենց հետևանքը՝ սեռական զգացմունքի վաղ հայտնվելու տեսակետից։ Ահա սա յե պատճառներից ամենազլխավորը, վորի վրա յես անհրաժեշտ համարեցի կանգ առնել։

Ինչ վերաբերում է կանանց պատասխաններին, պետք է ասել, վոր սրանք ամենախածությունից, թե մի այլ պատճառից՝ աշխատել են թաքցնել, և 75 հոգուց 60 հոգի պատասխանել է՝ «չի հիշում»։

Բայց հետաքրքրական է՝ թե ինչից և ծագում այդ զգացմունքը. այդ հարցին պատասխանում է հետևյալ աղյուսակը։

7-րդ աղյուսակ

Ինչից առաջ յեկավ	Թոռոմարտ. գրգռվել	Հրամայտատ. գրգռվել	Մանկ. վարք. ինստատ.		Բանդիտ		Հարյուր գոմաս		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Ինքնաբերաբար .	7	14	10	7	71	5	85	18	217
Արտաքին գործ. .	6	5	2	—	12	—	15	—	40
Աղջիկ. հետ. խաղ. .	17	23	—	—	39	—	45	—	124
Ընկերների ազդ. .	16	13	3	1	42	1	57	2	135
Գրականութ. . .	—	—	—	—	1	—	2	—	3
Ուսուցիչ . . .	—	—	—	—	—	—	2	—	2
Չեն պատասխան .	—	—	—	—	—	18	1	21	40
Գումար .	46	55	15	8	165	24	206	41	562

Աղյուսակի թվերը շատ են հետաքրքրական և արժե կանգ առնել նրանց վրա։ Պատասխան տվողներից 217 հոգի, այսինքն 39,6 տոկոսը, գրել է, վոր իր սեռական զգացմունքը ծագել է ինքնաբերաբար՝ առանց վորևե ուրիշի միջամտության. սա այն դեպքերն են, վորոնց մասին վերը հիշեցինք, յերբ խոսում եյինք այդ զգացմունքի վաղաժամ զարգանալու մասին։ Յերկրորդ տեղը բռնում են ընկերները. դրանց ազդեցությունից է հայտնվել 135 հոգու սեռական զգացմունքը. 18-20 տարեկան յերիտասարդները գրույցներով ու իրենց կատակներով զարթեցնում են փոքր ընկերների մեջ այդ զգացմունքը. յուրաքանչյուր յերիտասարդ այդ բանը պետք է միշտ ի նկատի ունենա և ուշադիր լինի, վոր իր խոսքերով ու շարժումներով չը զարթեցնի ուրիշի սեռական զգացմունքը։ 2 հոգու սեռական զգացմունքը հայտնվել է ուսուցիչների ազդեցությամբ. անզգույշ ուսուցիչներ ես կան։ Իր քանակությամբ պակաս տեղ չի բռնում և աղջիկների հետ միասին խաղալը։ 124 հոգու սեռական զգացմունքը ծագել է այդ խաղերի ազդեցության տակ։ Պատասխան տվողների 22 տոկոսի ձգտումը այդ ազդեցության տակ է զարթնել։

Այստեղ մեծ նշանակություն է ստանում յերկու սեռի միատեղ սովորելն ու զբաղվելը։ Անցյալ դարի վերջից արդեն ընդունված է յերկու սեռի միատեղ սովորելու սկզբունքը. վերջ ի վերջո յեկան այն յեզրակացության, վոր յերկու սեռի միատեղ ուսումը կարելի յե թույլ տալ միայն ստորին դասարաններում, իսկ բարձր դասարաններում պետք է միմյանցից դա՝-դա պարապեն, այսինքն առանձին դպրոցներում։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընդունված է միատեղ ուսում բոլոր դասարաններում։ Մեր թերթի պատասխան տվողներից շատերը հիշել են վորբանոցային և դպրոցական կյանքի մասին. իմ կարծիքով դրա պատճառն այն է, վոր մեր յերիտասարդները մանկությունից չեն սկսել սովորել աղջիկների հետ, այլ պատանեկան հասակից են սկսել. վորքան վաղ սկսվեն յերկու սեռի միատեղ զբաղմունքները, այնքան քիչ դեր կարող է խաղալ սեռական զգացմունքի ծագման վրա հիշյալ հանգամանքը։ Յերբ հակառակ սեռի անձինք յերեխայական հասակից են ընտելանում միմյանց, այն ժամանակ պատանեկան հասակում նրանց սեռական ձգտումը այն թափը և այն կերպարանքը չի ունենա, ինչ մենք տեսնում ենք այժմ։

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/XI-1922
ԱՆՎԱՆ Ա. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ
Ա. ՍԱՄՍՈՆԻՆ

Գալով արտաքին գործոններից զարթնած զգացմունքին, այստեղ հիշատակելու արժանի չեն հետևյալ ազդակները՝ անհարմար զգեստը, ձի հեծնելը, մարզանոց բարձրանալը, վորոնք գրգռելով սեռական գործարանը՝ պատճառ են դառնում սեռական զգացմունքի յերևվալուն. այդ տեսակ յերիտասարդների թիվը 40-ն է, այսինքն մոտ 12 տոկոս։

Ըստ պատասխանողներն էլ մեծ թիվ են կազմում՝ դարձյալ 40 հոգի՝ 12 տոկոս և դրանցից 39 հոգին կանայք են։ Այս հանգամանքը կարելի է բացատրել մասամբ կանանց ամոթխածությամբ։ մասամբ էլ կնոջ կրավորականությամբ. սեռական հարցում կինը առհասարակ կրավորական է, նա կարող է հեշտությամբ զսպել իրեն և չտարվել իր ընազդով։

ՈՆԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձեռնաշարժությամբ պարապել է. ձեռնաշարժությունը ոնանականություն է. ոնանականություն կոչվում է արհեստական կերպով սեռական ցանկություն բավարարելը։

Մենք վերը տեսանք՝ թե վորքան վաղ է ծագում սեռական զգացմունքը. իսկ յուրաքանչյուր զգացմունք պահանջում է բավարարում. սեռական զգացմունքին բավարարություն տալու համար բավական է այս կամ այն կերպ շփել կամ տրորել սեռական գործարանը կամ նրան կից շրջանները։

Մարմնի այն մասը, վորտեղ գտնվում են սեռական գործարաններն ու նրանց մոտի շրջանը, շատ հարուստ է ներվերով. այս վերջինների գրգռումը առաջ է բերում սեռական զգացմունք և յուրատեսակ հաճույք։ Շատերը գտնում են, վոր ծծկեր մանուկը սեռական հաճույք է ստանում, յերբ նա՝ շրթունքների սիթմիկ շարժումով՝ ծծում է մոր ստինքը։

Մարդու կազմվածքի անհերգաշնակությունը հենց այն է, վոր սեռական հաճույքը կա է այն ժամանակ, յերբ սեռական գործարանները կատարելապես զարգացած չեն, յերբ դեռ ամորձիքը սերմ չի պատրաստում. հենց այդ հաճույքով է բացատրվում փոքր յերեխաների հետևյալ ագեղ սովորությունը՝ գիշերը քնած ժամանակ ձեռքերը սեռական գործարանների վրա պահել, կամ այն՝ վոր աղջիկները միշտ ձեռքերը գրպանն են կոխում և խաղում անդամի հետ։

Սեռական զգացմունքը ծագելով այս կամ այն կերպ, ինչպես արդեն ասացինք, պահանջում է իր բավարարությունը. սեռական հաճույք ստանալու համար սկսում են շփել, տրորել սեռական գործարանները և արհեստական կերպով հայտնաբերել սեռական հաճույք. ով մի անգամ սովորեց, էլ դժվար թե հրաժարվի դրանից, վորովհետև շատ հեշտ է կատարելը. ոնանականության համար յերկրորդ ընկերակից չի հարկավոր. նա շատ կարճ ժամանակ է տևում և արագ էլ ստացվում է նրանից հաճույքը։

Ավելորդ ենք համարում յերկար կանգ առնել դրա վրա և թույլ ենք տալիս մեզ անցնել աղյուսակին։

8-րդ աղյուսակ.

Պատասխան	Եղանիներ	Աղջիկներ	Մարդկանց		Կանանց		Հարցված		Ընդամենը
			արական	իգական	արական	իգական	արական	իգական	
Պարապել է . . .	44	46	15	1	130	—	167	2	405
Չի պարապել . .	2	9	—	2	32	7	36	26	114
Չեն պատասխան .	—	—	—	5	3	17	3	15	43
Գումար . .	46	55	15	8	165	24	206	43	562

Այս թվերից պարզ յերևվում է, վոր 562 հ. պատասխան տվողներից 405-ը պարապել է ոնանականությամբ. սա պատկառելի թիվ է և կազմում է ամբողջի 72 տոկոսը. բայց յես կասեմ, վոր շատերը ցույց չեն տվել իսկությունը. բանֆակի ուսանողներից մեկն այդ հարցին պատասխանելիս գրել է՝ «ի հարկե, պարապել եմ. ով չի պարապել. ով ասում է «չե», նա սուտ է ասում»։ Միանգամայն ճիշտ նկատողություն։ Յեթե նույն իսկ հավատ ընծայենք չ՝պատասխանողներին ու «վոչ» ասողներին, միացածն էլ բավական է, դա 72 տոկոս է. արժե վոր մտածեն դրա մասին ծնողները, մանկավարժները ու բժիշկները և աշխատեն հեռու պահել այդ ախտից։

Ոնանականների մեծագույն մասը քաղաքում ապրածներն են։ գյուղացիք քիչ տոկոսն են կազմում։

Ոնանականությունը՝ հաճախ կրկնվելով՝ դառնում է սովորություն, վորից ազատվելը դժվար է լինում. բացի այդ, շարունակվելով յերկար տարիներ, քայքայում է դեռ չզարգացած կազմվածքը, պատճառ դառնում սեռական անկարության ու մինչև անդամ ընդհանուր ներվաթության։

Տարաբախտաբար հնարավորություն չկա այստեղ յերկար կանգ առնել այդ ավերիչ ախտի վրա, ուստի անցնում ենք թվերին՝ Ռազմաք. դպրոցի 46 հոգուց պարապել են 44-ը, այսինքն համարյա 96 տոկոսը. հրամանատարական դպրոցի 55 հոգուց՝ 46-ը, այսինքն 82 տոկոսը. ժանկավարժական ինստիտուտի 15 հոգին բոլորն ել պարապել են, այսինքն 100 տոկոսը. բանֆակի 165 հոգուց 130-ը պարապել են ձեռնաշարժությամբ, այսինքն 78 տոկոս. իսկ համալսարանի 206 հոգուց՝ 167-ը, այսինքն 81 տոկոս։

Կանանցից միայն յերեք հոգի են գրել, որ պարապել են ոնանականությամբ։

Ոնանականությունը սեռական ցանկության բավարարման անբնական ձևն է. որքան վաղ է սկսվում, այնքան վատ պարապողի համար. տեսնենք, թե ով յերբ է սկսել ոնանականությամբ պարապելը։

9-րդ աղյուսակ

Տարիք	Ամբարտավան. ֆանտազիաներ	Հրամանատարական ֆանտազիաներ	Մաստուրբացիա.		Բանֆակ		Հայրենասեր		Ընդամենը
			արս.	իգ.	արս.	իգ	արս.	իգ.	
8	—	—	—	—	1	—	1	—	2
9	—	—	—	—	—	—	1	—	1
10	—	—	—	—	—	—	3	1	4
11	—	1	—	—	1	—	1	—	3
12	—	1	—	—	—	—	9	—	10
13	—	1	—	—	8	—	12	1	22
14	4	5	—	—	9	—	16	—	34
15	4	8	7	—	25	—	30	—	74
16	15	11	3	—	28	-	32	–	89
17	10	9	3	—	28	—	34	—	84
18	6	9	2	–	15		11	—	43
19	3	1	—	—	6	—	9	—	19
20	—	—	—	1	6	—	4	—	11
21	2	—	—	—	1	—	—	—	3

Կան անձինք և, որոնք սկսել են ոնանալը 22 և բարձր տա-

ռիքից հետո՝ 22 տ. 1 հ., 23 տ. 1 հոգի և 25 տ. 2 հոգի. դրանցից բարձր տարիքի ոնանական չկա։

Ի՞նչ են տալիս մեզ այս թվերը.

Այս թվերից մենք տեսնում ենք, ինչպես 8-9 տարեկան յերեխան սկսել և ոնանականությունը. մինչև 14 տարեկան հասակը ամորձիքները սերմ չեն պատրաստում. մինչև այդ հասակը ոնանականը սերմնահեղություն չի ունենում ոնանելիս, բայց և այնպես սեռական հաճույքն ստիպում է մանուկներին դիմել այդ ախտին և քայքայել իրենց դեռ չզարգացած կազմվածքը։

Տարիքի հետ զուգընթաց շատանում է ոնանականների թիվը. և առավելագույնը հասնում է 17-18 տարուն, որից հետո աստիճանաբար ընկնում է, ու զարմանալին այն է, որ գտնվում են անհատներ, որոնք քսան տարեկան կամ ել ավելի բարձր, 25 տարեկան հասակումն են սկսում ոնանելը։

Ահա թե որպիսի անբնական քայլեր է ստիպում անել ոգիությունը։

Մենք վերն առիթ ունեցանք հիշելու, որ վաղ սկսած ոնանականությունը սեռական անկարություն և ընդհանուր ներվաթուլություն է առաջ բերում. իսկ ներվային հիվանդագին կազմվածք ունեցողների առողջությունը բոլորովին քայքայվում է։ Միևնույն տեսակի վնասումներ առաջ է բերում և յերկար ժամանակով ոնանելը։ Այստեղ պետք է հիշատակել, որ Յերևանի յերիտասարդությունը, այսինքն պատասխան ազգները, բոլորն ել կարճ ժամանակով են պարապել ոնանականությամբ. իսկ դրա պատճառը այն է, որ շատ՝ վաղ են սկսել սեռական մերձավորությունը։

Անցնենք հարցաթերթին. ոնանականության առողջության վրա թողած ազդեցությունը. ահա և աղյուսակը.

10-րդ աղյուսակ

Թողած ազդեցությունը	Ամբարտավան. ֆանտազիաներ	Հրամանատարական ֆանտազիաներ	Մաստուրբացիա.		Բանֆակ		Հայրենասեր		Ընդամենը
			արս.	իգ.	արս.	իգ.	արս.	իգ.	
Վատ	30	24	6	1	62	—	80	—	203
Լավ	1	2	1	–	8	—	9	—	21
Անփոփոխ . . .	12	28	7	—	56	—	77	2	182
Չեն պատաս. . .	3	1	1	7	39	24	40	41	156
Գումար. .	46	55	15	8	165	24	206	43	562

կանայք, բացի մեկից, բոլորն էլ խուսափել են պատասխանից։

«Վատը» նշանակում է սեռական գործարաններին թուլություն, ընդհանուր կազմվածքի թուլություն, հիշողության պակասություն, մտավոր զբաղմունքի անկարողություն և այլն։ «Լավը» ցույց են տվել նրանք, որոնք պատահաբար մի քանի անգամ են պարապել, այնպես որ, այս պատասխանն ունի նշանակություն այն տեսակետից, որ միայն 21 հոգի են մեկ, կամ մի քանի անգամ պարապել. մնացածները սովորություն են դարձրել ոնանականությունը, իսկ այս վերջիններին, 203 հոգու պատասխանը մեզ արդեն հայտնի է, և ուշադրավը դրանց պատասխանն է։ Անփոփոխ պատասխան տվողները 182 հոգի են. նրանց թերթերից երևվում է, որ քիչ են պարապել ոնանականությամբ և լավ չեն դիտել իրենց առողջությունը։ Չպատասխանողներից մեծ մասն ուղղակի լուրջ չի վերաբերվել այդ հարցին, կամ լավ չի հասկացել. հակառակ պարագայում նրանք 156 հոգի չէին կազմի։

Վերն ասացինք, որ ոնանականությունը անբնական սեռական մերձավորություն է. ոնանողը միշտ պատկերացնում է իրեն սիրո առարկան և այդ գրության մեջ արհեստական կերպով սերմնահոսություն է առաջ բերում, դրանով սեռական հաճույք է ստանում. ապա ուրեմն հետաքրքրական է իմանալ ոնանականի վերաբերմունքը դեպի կինը։

Ինչ վերաբերմունք ունի կին ոնանականը դեպի տղամարդը, մենք չենք ասի, որովհետև այս հարցին էլ կանայք, բացի յերկուսից, խուսափել են պատասխանից. մենք 3-րդ աղյուսակից գիտենք, որ կանանցից միայն 8 հոգի յեն անկեղծ յեղել և պատասխանել են, որ պարապել են. այստեղ էլ միայն 3 կին են պատասխանել՝ մեկը գրել է՝ «վատ», իսկ յերկուսը գրել են՝ «անփոփոխ»։

Ահա տղամարդկանց պատասխանները։ 11-րդ աղյուսակ.

Դեպի կինը ունեցած վերաբերմունքի վրա թողած ազդեցությունը	Առանց բացի	Հրամայական պարզ	Անկախ-ությունի զարգացում	Բարձրացավ	Հանգստացավ	Ընդամենը	
Վատ	5	9	6	6	30	56	
Լավ	22	21	3	46	65	157	
Անփոփոխ . . .	16	20	3	42	62	143	
Չեն պատասխանել	3	5	3	71	49	131	

Այս հարցին 131 հոգի չեն պատասխանել. դրանք կամ անհարմար են համարել կամ չեն հասկացել հարցը. կամ լավ դիտողություն չեն ունեցել՝ հետևելու թե արդյոք ինչպիսի զգացմունք են տածել իրենք դեպի կինը։ Անփոփոխ պատասխանողները համապատասխանում են նախընթաց աղյուսակի պատասխանողներին. դրանք լավ չեն դիտել և ուրիշ վոչինչ։

«Վատ» գրողները արտահայտվել են այսպես՝ անտարբերություն, խուսափումն, ամոթխածություն, զզվանք և այլն. ի հարկե դրա պատճառն է սեռական զգացմունքի բավարարումը, որից հետո ոնանականը ձգտում չի ունենում այլևս դեպի կինը։ Այս առաջին պատճառը, իսկ յերկրորդը հետևյալն է.

Ոնանականի հոգեկան դրությունը կարոտ է պարզարանման. բանը նրանումն է, որ յուրաքանչյուր ոնանական՝ գործողությունը կատարելուց հետո իրեն շատ վատ է զգում. ամոթը, որ վատ բան է արել՝ սաստիկ ճնշում է ոնանականին. նա աշխատում է մենականալ, առանձնանալ, խույս է տալիս հասարակությունից և մանավանդ կանանցից. հետո այդ խուսափումը աստիճանաբար փոխվում է և զզվանքի. սա էլ յերկրորդ պատճառն է դեպի կինը վատ վերաբերվելուն։

Աղյուսակի 56 թիվը կազմում է բոլոր պատասխանողների 10 տոկոսը, այդ 56 հոգին մոլի ոնանականներ են, որոնք բոլորն էլ ունեն ներվախություն՝ կամ սեռական, կամ ընդհանուր։ Յեթե ընդունենք, որ շատերը գիտամիտ չեն պատասխանել ու շատերը թաքցրել են այդ բանը, այն ժամանակ հասկանալի կլինի թե՝ որքան շատ հիվանդներ կան մեր յերիտասարդության մեջ։

«Լավ» պատասխանողները՝ 157 հոգի, արտահայտվել են այսպես՝ քնքշորեն, ավելի հետաքրքրություն, զրգիռ, ուժեղ ձգտում։ Սրանք համեմատաբար առողջ մարդիկ են, ոնանականությամբ պարապել են քիչ, կամ պարապել են պատահաբար, այդ պատճառով էլ նրանց վերաբերմունքը դեպի կինը մնացել է ընական դրության մեջ, համապատասխան յուրաքանչյուրի խառնվածքին։

Անցնենք այժմ ոնանականության հետաքրքիր կողմին՝ ինչից և առաջ յեկել նա, ում ազդեցության տակ, ոնանականության պատճառները։

12-րդ աղյուսակ

Ոնանականության պատճառները	Ամուսնանալ ցանկանալ	Հարազատներ	Մանկական խրախճանքի	Կամքով	Հոգեբանական	Ընդամենը
Ներքին զրգռում .	6	22	5	40	49	122
Արտաք. զրգռում .	1	10	4	21	20	56
Ընկերներ . . .	32	13	6	55	80	186
Գրական., թատրոն, կինո	2	3	8	7	17	29
Չեն պատասխանել	5	7	—	42	40	94
Գումար . .	46	55	15	165	206	487

75 հոգի կանանցից միայն մեկն է պատասխանել այս հարցին. մնացածները վոչինչ չեն պատասխանել, դրա համար էլ նրանք դուրս են ձգված աղյուսակից։ Այդ մեկ կինը ցույց է տվել, իբրև պատճառ ոնանականության, ներքին զրգիռը։

Պատասխան տվող տղամարդկանցից 122 հոգին ոնանականության պատճառը հաշվել են ներքին զրգռումը. սեռական գործարանները սկսել են գործել, գրգռվել են ու սաիպել են պատասխանողին արհեստական կերպով դատարկել, վոր ազատվի կիսված սեռական հյութից։

Արտաքին զրգռումները՝ կանանց տեսքը, որիորդների հետ զրույցը, կնոջ մարմնի բաց մասերը՝ կուրծքը, թևերը և այլն։ Բոլորովին մերկ կին տեսնելը, մինչև անգամ և կնոջ զգեստը. այս բոլորն էլ հիվանդ ներվային համակարգություն ունեցողներին մղում է դեպի ոնանականություն. այդ տեսակների թիվը 56 է, այսինքն դարձյալ 10 տոկոս, վորը մենք տեսանք նախընթաց աղյուսակում։

Այս հարցում ամենապատվավոր տեղը պատկանում է ընկերներին. պատասխան տվող տղամարդկանցից 487 հոգուց 186-ի ոնանականության պատճառը յեղել են ընկերները. դա կազմում է 38 տոկոս. ընկերների շնորհիվ է, վոր ոնանականությունը շատ շուտ տարածվում է պատանիների մեջ, մանավանդ փակ դպրոցներում։ Ոնանականությունը՝ վարակիչ ախտի պես շատ շուտ անցնում է մեկից մյուսին։ Մեծ տարիք ունեցող ոնանականները յերբեմն կատարում են իրենց գործը մանր տղաների մոտ, առանց քաշվելու, այդ կերպ պատճառ դառնալով ականատեսի ոնանականությանը։

Յուրաքանչյուր պատանի պետք է ունենա գիտակցություն զսպել իրեն և չպարապել դրանով, իսկ յեթե ինքն այնքան թուլակամ է, վոր չի կարող իրեն զսպել, պետք է գոնե այնքան գիտակցություն ունենա, վոր ուրիշներին չտա այդ ախտը։

Գրականությունը, կինոն, թատրոնը նույնպես ազդում են և պատճառ են դառնում ոնանականությանը։ Այդ տեսակ պատասխան տվողները 29 հոգի են և կազմում են մոտ 6 տոկոս. դրանք պատկանում են հիվանդ տիպերին. որինակ՝ մեկը դրանք գրում է՝ «իմ ոնանականության պատճառը դառավ բժ. Բուդուղյանի «մտերմական խրատներ» գիրքը. պետք է այրել այդ տեսակ գրականությունը»։

Մի՞թե պարզ չէ այս խոսքերից՝ թե ում հետ գործ ունենք, ով է խոսողը։ Այստեղ խոսում է խելական հիվանդը. միայն հիվանդ ներվային համակարգություն ունեցողի վրա գրականությունը՝ այն էլ բժշկական մտերմական խրատները, կարող են հակառակ ազդեցություն ունենալ՝ փոխանակ հեռու պահելու ոնանականությունից, ընդհակառակը, մղել դեպի ոնանականությունը։

Իսկ ինչ վերաբերում է չպատասխանողներին, յես ավելորդ եմ համարում նրանց մասին խոսել, քանի վոր ակնհայտ է, վոր նրանց մեծ մասը թագցրել են և դիտմամբ չեն ուզեցել պատասխանել։

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍԵՐՄՆԱՀԵՂՈՒԹՅՈՒՆ

Սեռական գործարաններն յենթարկվում են բնական վորոշ որենքների, նրանք իրենց տիրոջից անկախ և նրա կամքից դուրս անընդհատ գործում են։ Ամորձիքները անընդհատ սերմ են արտադրում. սերմը սերմնատար խողովակներով լցվում է սերմնապարկերի մեջ, այստեղ սերմի մի մասը յերկար մնալուց հետո չորանում ծծվում է, իսկ մյուս մասը ժամանակ առ ժամանակ դուրս է թափվում գիշերը քնած ժամանակ. այդ տեսակ սերմնահոսությունները ժողովրդական լեզվով յերազախարություն են կոչվում, վորովհետև միշտ դրանց հետ լինում են զրգիռ և սիրային յերազներ։

Կանայք սերմնահոսություն չեն ունենում հասկանալի պատ-

ձառով. սրանք ևս ունենում են սիրային գրգռիչ յերազներ, իսկ սերմնահոսության փոխարեն նրանց արտաքին գործարանների գեղձերը հեղուկ են արտադրում և թացացնում են արտաքուստ, իսկ ներսից վոչ մի փոփոխություն տեղի չի ունենում։

Պատասխան տվող 487 տղամարդկանցից 379-ը ունեցել է գիշերային սերմնահոսություններ. սա կազմում է 78 տոկոս. մնացածները վոչինչ չեն պատասխանել, կամ գրել են՝ «չենք հիշում», իսկ մի քանիսն էլ գրել են, վոր բոլորովին չեն ունեցել. այս վերջին հանգամանքի մասին քիչ հետո, իսկ այժմ անցնենք հետաքրքիր հարցին՝ վոր հասակում յերևաց առաջին գիշերային սերմնահոսությունը.

13-րդ աղյուսակ

Տարիք	Ինքնաբերաբար	Հրամանատարությամբ	Մանրամասնորեն	Բանվոր	Հասարակ	Ընդամենը
11	—	—	—	1	—	1
12	—	—	—	1	1	2
13	—	1	—	4	4	9
14	1	—	—	5	7	13
15	5	7	—	10	16	38
16	4	3	1	19	32	59
17	9	9	2	33	30	83
18	10	21	3	23	39	96
19	3	7	—	16	9	35
20	10	1	—	11	8	30
21	2	—	—	6	2	10
23	—	—	—	2	1	3
Գումար	44	49	6	131	149	379

Նախ և առաջ պետք է ասել, վոր պատասխան տվողներից 22 տարեկան հասակի գիշերային առաջին սերմնահոսություն ունեցող չկա. հետաքրքրության արժանի յեն այն անձինք, վորոնց գիշերային սերմնահոսությունը առաջին անգամ յերևացել է 11, 12 և 13 տարեկան հասակում. ահա այսպես, ներվային և սեռական տեսակետից դյուրագրգիռ անհատներն են, վոր շատ վաղ,

մատաղ հասակում սկսում են ոնանականությունը և կորստյան մատնում իրենց։

Յերկու սեռի տարբերման հասակը 14-15 և 16 տարին է. այդ հասակում սեռական գործարանները սկսում են ուժեղ գործել, այդ հասակում հայտնվում են արուի յերկրորդական հատկանիշները և այդ հասակում պետք է շատ լիներ այն յերիտասարդների թիվը, վորոնք ունեցել են առաջին՝ յերազախարությունը։

Իսկ ինչ ենք տեսնում՝ 17 և 18 տարեկան հասակում առաջին յերազախարություն ունեցողների թիվը գերազանցում է բնական հասակը, ահա թվերը՝ 14 տ. 13, 15 տ. 38, իսկ 17 տ. 83 և 18 տ. 96 հոգի։

Սա պատահական բան չը պետք է համարել. սա բացատրվում է ոնանականությամբ. այդ ախտը կորստաբեր ազդեցություն է թողնում սեռական գործարանների վրա. ոնանականի սեռական գործարանները խանգարվում են, բնական ճանապարհից դուրս են գալիս և առանց արհեստական կերպով գրգռումի նրանք ի վիճակի չեն սերմ պատրաստել, այս մեկ։

Իսկ յերկրորդ՝ շնորհիվ արհեստական կերպով, այսինքն՝ ոնանականության միջոցով հաճախ կրկնվող սերմնահոսության, սեռական գործարանները, գլխավորապես սերմնարանը, ամորձիքը, չեն հասցնում սերմի պատրաստելը, զրկվում են հնարավորությունից անընդհատ պատրաստելու, մի խոսքով անկարանում են։

9-րդ աղյուսակից պարզ յերևում է, վոր ոնանականությամբ ուժեղ պարապողները 14, 15, 16 տարեկաններն են, վորոնք այդ հասակումն են սկսել պարապել, իսկ յերբ 17-18 տարեկան հասակում դադարեցրել են ոնանականությունը, սեռական գործարանները մտել են իրենց բնական հունի մեջ՝ սերմի պաշարը շատացել է, սերմնապարկերում սերմ յեղել է և գիշերները դուրս է ժայթել. ահա մեր թվերի լեզուն։

Այս տեսակետից շատ հետաքրքրական է մեկ յերիտասարդի պատասխանը՝ յերազախարություն չի ունեցել յերբեք իր կյանքում. սա 8 տարեկան հասակից ոնանական է և շարունակում է պարապել. ինչ ասել կուզի, վոր գիշերային սերմնահեղություն չունենալը բացատրվում է վերը բերած պատճառներից մեկն ու մեկով, կամ դուցե հենց յերկուսով էլ՝ կամ սերմ չկա սերմնապարկում կամ ամորձիքները անկարացել են՝ սերմ չեն պատրաստում։

Ահա թե ինչպիսի կորստաբեր հետևանքներ է ունենում ոնանականությունը։

Կան մի քանի ուսանողներ, որոնք գրել են, ոնանականությամբ չեն պարապել և գիշերային սերմնահոսություն չունեն։ Թող ներվի մեզ ասել, որ այդ յերիտասարդները ուղիղ չեն պատասխանել, որովհետև դա միանգամայն անհավատալի է, ի հարկե, յեթե նրանք սեռականապես առողջ են։

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս՝ սակավ է լինում գիշերային սերմնահոսությունը թե հաճախ։

Բնախոսությունից հայտնի է, որ բնական և համարվում ամիսը մեկ կամ յերկու անգամ կրկնվող յերազախառը։ Դրանից ուշը սակավ կարելի է համարել. շաբաթը մեկ անգամը դարձյալ հաճախ չէ. շաբաթվա մեջ մի քանի անգամ կրկնվող, ժանավանդ ամենորյան, կամ մի գիշերվա մեջ 2-3 անգամ յերազախառը հաշվվում է հաճախ։

14-րդ աղյուսակ

Պատասխան	Լեռնարտ. գեղեր	Հրամանատ. գեղեր	Մանկա-վարժ. ինստիտ.	Բանվոր	Հասար-տան	Ընդամենը
Հաճախ	12	25	6	35	61	139
Սակավ	30	27	8	106	123	294
Գումար	42	52	14	141	184	433

Պատասխանները թերթելիս աչքի է ընկնում այն, որ ոնանականները յերազախառություն սակավ են ունենում. պատճառը մենք արդեն գիտենք վերը բերածս տողերից։ Մի քանի պատասխանողներ իրենք են գրել՝ «սակավ է՝ ոնանականության պատճառով»։ Կան մի քանի ոնանականներ, որոնք, ընդհակառակը, գանգատվում են հաճախ յերազախառությունից. դրա պատճառը նրանց սերմի գերարտադրությունն է. սա բացատրվում է նրանց անհատականությամբ, կամ նրանով, որ այդ անձինք քիչ են պարապում ոնանականությամբ. վերջինս գրգռելով ամորձիքները՝ նպաստում է սերմի գերարտադրության, կամ այդ գրությունը ժամանակավոր է, որից հետո նորից կը պակասի։

Այս աղյուսակի թվերը ավելի մոտ են իրականությանը՝

90-96 տոկոսը ունենում է գիշերային սերմնահոսություն։ 433 հոգուց միայն մեկ ուսանող խիստ գանգատվել է հաճախ սերմնահոսությունից։ Նա նույն իսկ արթուն ժամանակ ել է ունենում սերմնահոսություն. սա հիվանդագին յերևույթ է և կարոտ է բժշկության։

ՍԵՌԱԿԱՆ ՄԵՐՁԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մենք տեսանք, թե ինչ արագ թափով է զարգանում յերիտասարդության սեռական զգացմունքը, որն այսպես, թե այնպես սոխալում է բավարարել։ Սեռական ցանկության բավարարումը սկզբում լինում է անբնական և կատարվում է ոնանականության միջոցով, իսկ հետո նա ընդունում է բնական ձև և կատարվում է իսկական սեռական մերձավորության միջոցով։

Այդ հանգամանքը պարզելու համար գրված 18-րդ հարցը՝ ունեցել է սեռական հարաբերություն։ Այստեղ կանայք խուսափել են պատասխանից, ի բաց առյալ մի յերկուսից, իսկ մեծ մասը, մինչև անգամ ամուսնացածները, լռելյայն են անցել այդ հարցից. բայց և այնպես հետաքրքրական է այդ հարցի աղյուսակը։

15-րդ աղյուսակ.

Պատասխան	Լեռնարտ. գեղեր	Հրամանատ. գեղեր	Մանկա-վարժ. ինստիտ.		Բանվոր		Հասար-տան		Ընդամենը
			արս.	իգ.	արս	իգ	արս.	իգ.	
Այո . .	25	43	14	2	90	12	140	2	328
Վոչ . .	21	12	1	6	75	12	66	41	234
Գումար .	46	55	15	8	165	24	206	43	562

Ինչպես տեսնում ենք այս թվերից, պատասխանողների 58 տոկոսն ունեցել է հարաբերություն, իսկ 42 տոկոսը՝ վոչ. առաջինների տոկոսը կավելանար, յեթե մնացածները, և մանավանդ կանայք, քիչ անկեղծ լինելին և չը թաղնելին այդ հարցն առանց պատասխանի։ Մենք չպատասխանող կանանց վոչ պատասխանողների շարքին ենք դասել. դրա համար ել վոչ պատասխանողների տոկոսն ավել է։

Եթե այդ թվերին նայենք յուրաքանչյուր հիմնարկությունն առանձին, հետաքրքիր բան կտեսնենք՝ 1) Ռազմաքաղ. դպրոցի սաների կիսից ավելին պատասխանել է՝ «այո», 2) Հրամանատարական դպրոցի 78 տոկոսը ավել է «այո» պատասխանը. 3) Մանկավարժական Ինստիտուտի ուսանող աղամարդկանցից 93 տոկոսի պատասխանն է «այո», 4) Բանֆակի ուսանողներից (աղամարդկանցից) 54 տոկոսը և կանանցից 50 տոկոսը պատասխանել է «այո» 5) Համալսարանի ուսանողներից 67 տոկոսի պատասխանն է «այո»։

Ահա, թե որքան զանազանություն կա թվերի մեջ, դրա պատճառը հետևյալն է. այն հիմնարկությունների սաները, որոնք հասակով մեծ են և քաղաքում մեծացած, նրանք սեռական հարաբերության մեծ տոկոսն են տալիս։

Պատասխաններին նայելիս աչքի չի զարնում այն, որ մի քանի որիորդներ ունեցել են սեռական հարաբերություն։ Բոլորն էլ միաբերան պնդում են սեռական հարաբերության անհրաժեշտության վրա, իբրև բնական պահանջի վրա։

Տարաբախտաբար շատ-շատերը չգիտեն, որ սեռական հարաբերությունը հաճույքի համար չէ, սեռական ցանկության բավարարման համար չէ, որ սեռական մերձավորությունը, սեռական գործարանների լարվածությունը թուլացնելու և սեռական գործարաններից կիտված սեռական հյութերի դուրս մղելու համար չէ։

Սեռական հարցի կենսաբանությունն ուսուցանում է, որ սեռական մերձավորությունը մի միջոց է միացնելու արուի և էգի սեռական բջիջները, դա մի միջոց է ձուն բեղմնավորելու սերմնյակով, որպեսզի մի նոր էակ գոյանա։

Բոլոր կենդանիները, նույնպես և մարդը, յենթարկվում են բնության որենքներին՝ տեսակի պահպանման որենքին։

Բոլոր կենդանիները բազմանում են այդ որենքի հիման վրա սեռական հարաբերության միջոցով. և բոլորն էլ պարտավոր են սեռական հյութերը գործածել միայն ու միայն այդ նպատակի համար։

Իսկ ինչ ենք մենք տեսնում. մինչև անգամ որիորդը, որը ի ծնե կրավորական է, սեռական հարաբերություն է ունենում և հանգիստ խղճով արդարանում՝ բնական պահանջով։ Կրկնում ենք, սեռական հարաբերությունը բնական պահանջ չէ, այլ միջոց է բնական պահանջի, այսինքն տեսակի զարգացման համար։

Շնորհիվ արտաքին գործոնների, շնորհիվ ընկերների, շնորհիվ վատ դաստիարակության, վերջապես, շնորհիվ ոգիտության՝ սեռական հարաբերությունն արհեստական կերպով պահանջ է դարձել. այլ կերպ չի կարելի բացատրել դեռատիների և մանավանդ մանուկների ու յերեխաների սեռական հարաբերությունը. ինչ պահանջի մասին, այն էլ բնական, կարող է խոսք լինել, յերբ հարաբերություն են ունենում անձինք, որոնց ֆիզիկական կազմվածքը դեռ լիակատար չի ձևավորվել, որոնց իսկական առնական հասունությունը դեռ շատ հեռու յա։ Ապացույց՝ հետևյալ հարցի պատասխանները, որոնք շատ լավ արտահայտում են աղյուսակի թվերը.

Ահա նրանք։

16-րդ աղյուսակ

Տարիք	Լաբորատորիայի հարցերին	Հարցարանի հարցերին	Մանկավարժական ինստիտուտի		Բանֆակի		Համալսարանի		Ընդամենը
			արական	իգական	արական	իգական	արական	իգական	
8	—	—	—	—	—	—	1	—	1
9	—	—	—	—	—	—	1	—	1
10	—	—	—	—	—	—	2	—	2
11	—	—	—	—	—	—	—	—	—
12	—	—	—	—	1	—	1	—	2
13	—	1	—	—	1	—	2	—	4
14	—	—	—	—	2	—	3	—	5
15	1	3	—	—	2	—	7	—	13
16	1	7	1	—	8	1	7	—	25
17	2	4	—	—	13	1	21	—	41
18	10	6	3	—	18	2	33	1	73
19	5	8	1	—	18	4	20	—	56
20	5	8	4		14	4	14	—	49
21	—	2	1	—	3	—	9	—	15
22	—	1	2	—	6	—	4	—	13
23	1	2	1	1	2	—	8	—	15
24	—	1	—	1	—	—	1	—	3
25	—	—	—	—	1	—	1	1	3
Բարձր	—	—	1	—	1	—	5	—	7
Գումար	25	43	14	2	90	12	140	2	328

Ինչ են ասում մեզ այս թվերը՝ 1) պատասխանողներից 73 հոգի առաջին հարաբերության ժամանակ 18 տարեկան են յեղել. այդ տարիքին են ամենաշատ հարաբերություն ունեցողները։

Բնական ժամանակը, այսինքն իսկական առնական հասունությունը տղամարդկանց համար 24-25 տարին է, իսկ կանանց՝ 20-22, յերբ կազմվածքը ամբողջովին կազմակերպված է և զսպիչ կենտրոնները գլխի ուղեղում զարգացած են. մինչդեռ մեր աղյուսակը ցույց է տալիս, որ սեռական հարաբերության ուժեղ թափն ընկնում է 17, 18, 19, և 20 տարիների վրա. քանի մոտենում է իսկական առնական հասունությունը, այնքան պակասում է հարաբերության թիվը և դա շատ հասկանալի յե. սեռական գործարանները 17, 18, և 19 տարեկան հասակում ուժեղ են գործում, նույնպես ուժեղ են գործում և 20-25 տ. հասակում. բայց 16-20տարեկան յերիտասարդի գլխի ուղեղի զսպիչ կենտրոնները կատարելապես զարգացած չեն, իսկ 20-ից հետո ըստ Ֆորելի և այլոց, գլխի ուղեղի այդ կենտրոններն սկսում են զարգանալ և պակասեցնում են սեռական գործարանների թափը. մինչև 20 տ. հասակը յերիտասարդը իրեն հաշիվ չի տալիս և կատարյալ գերի յե իր ընազդներին, իսկ 20 տ.-ից հետո զսպիչ կենտրոնները զարգանալ են սկսում և հետ են կանգնեցնում յերիտասարդին անվայել քայլերից։

Հիշատակման արժանի յե այն, որ վերը բերած Մխիթար Գոշի դատաստանագրքի մեջ տղամարդի իսկական հասունությունը, յերբ նա կարող է վկա լինել և յերդվել դատարանում, 12-րդ դարում հաշվվում եր 25 տարեկան հասակը։

Աղյուսակից յերևում է, որ 25-ից բարձր տարիքով առաջին անգամ հարաբերություն ունեցող կա։

Սեռական հարաբերություն կարելի յե ամենևին չունենալ և դա ֆիզիկական չե. նրանք, ովքեր մինչև 25 տարեկան հասակը կարողացել են զսպել իրենց, այդ հասակից հետո ավելի ի վիճակի յեն իրենց զսպելու, որովհետև չգործադրված սեռական գործարանները այդ հասակից հետո այն թափը չունեն, որպիսին ունեն մինչև այդ հասակը գործածվող սեռական գործարանները։

Մարդու բոլոր գործարանները, նրանց թվին և սեռական

գործարանները, աշխատելիս ավելի շուտ շուտ են լարվում և գրգռվում, քան յերբ նրանք չեն աշխատում։

Մեզ հետաքրքրողները սրանք չեն, այլ նրանք, որոնք սեռական հարաբերություն են ունեցել դեռատի ժամանակ՝ մանկական և յերեխայական հասակում։

Կան անձինք, որոնք իրենց հիվանդագին ժառանգականության, իրենց ֆիզիկական շրջապատի պատճառով շեղվում են կանոնավոր ընթացքից և սեռական հարաբերություն են ունենում մինչև անգամ այն հասակում, յերբ դեռ սեռական գործարանները կատարելապես չեն զարգացած, յերբ սեռական գործարանները սերմ չեն արտադրում, յերբ այդ գործարանները դեռ մինչև անգամ կազմակերպված չեն։

Ահա թե ինչն է ցավալի, ահա թե ինչի դեմ պետք է պայքարել. ինչ ասել կուզի, որ այդ տեսակ անձինք սեռական հարցում ավելի քան սանձարձակ են լինելու։

Սեռական գործարանները իրենց զարգացման կատարելությանը հասնում են վոչ վաղ 16 տարեկանից և դրանից վաղ հարաբերությունը միանգամայն կորստաբեր է գործարանների համար. 16-25 տարեկան հասակում յեղած հարաբերությունը ֆիզիկական է, իսկ դրանից վաղ յեղած հարաբերությունը հույժ ֆիզիկական և մինչև անգամ կորստաբեր այդ կարևորագույն գործարանների համար, ապա ուրեմն և ամբողջ կազմվածքի համար։

Ահա թվերը՝ 8 տ. 1 հոգի, 9 տ. 1 հոգի, 10 տ. 2 հ., 12 տ. 2 հ., 13 տ. 3 հ., 14 տ. 5 հ., 15 տ. 13 հ., ընդամենը 27 հոգի, այսինքն՝ պատասխանողների 8,8 տոկոսը ունեցել է անբնական սեռական հարաբերություն ժամանակից շատ վաղ։

Իբրև սեռական սանձարձակության որինակ՝ մի քանի տեղեկություններ տանք մեկ յերիտասարդի մասին, որն ասել է իր սեռական կյանքը 8 տարեկան հասակից. նա հաճախակի ունենում է սեռական հարաբերություն ամեն տեսակ կանանց հետ. առաջինը ունեցել է որիորդի հետ. ինքը գյուղացի է և 23 տ., նա 8 տարեկան հասակից սկսել է և ոնանականությունը. հեղափոխությունն ավելի ուժեղացրել է սեռական թափը. վոչ մի վանդ չի գտնում անկանոն հարաբերության մեջ. սովորություն էլ

չի ընդունում և ջատագով և կարճատև կապերի ու մինչև անպամ պոռնկի հետ հարաբերության։

Բայց անցնենք մյուս հարցերին։

Վերոնք են այն պատճառները, որ մղում են յերիտասարդներին դեպի սեռական հարաբերություն. այդ հարցին պատասխանում է հետևյալ աղյուսակը։

17-րդ աղյուսակ

Սեռական հարաբերութ. պատճառները	Գիտակցաբար	Հրամայաբար	Մանկավարժ. ինստիտուտում		Բանվոր		Գյուղաց.		Ընդամենը
			արբ.	իգ.	արբ.	իգ.	արբ.	իգ.	
Ներքին գրգռում	16	30	7	—	40	3	80	—	176
Ընկերներ	6	6	6	—	36	—	41	—	95
Գրականութ.	1	3	—	—	3	—	9	—	16
Ամուսնութ.	2	4	1	2	11	9	10	2	41
	25	43	14	2	90	12	140	2	328

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ միայն 41 հոգին է ամուսնության պատճառով ունեցել առաջին հարաբերությունը. դա կազմում է 12,5 տոկոսը. իսկ մնացածը — հաճույքի համար, սեռական ընազդը բավարարելու համար։

Միջանկյալ ասենք, որ ամուսնացածների թիվը 89 է, 48 հոգին մինչև ամուսնությունն է ունեցել հարաբերություն։

Հիշյալ թվից ճնշող մեծամասնությունը ընկնում է այն անձանց վրա, որոնք ունեցել են հարաբերություն ներքին գրգռման պատճառով. 95 հ. ընկերների ազդեցության տակ են արել այդ քայլը. բայց կան և այնպիսի հիվանդագին անձինք, որոնք գրականության ազդեցության տակ են արել այդ քայլը. ահա մի այդպիսի օրինակ՝ մի ուսանող, որն ընթերցանությունից հետո այնքան է գրգռվում, որ հարաբերություն է ունենում իր հարազատ մորաքրոջ դստեր հետ, մի օրիորդի հետ։

Բայց, բարոյականության տեսակետից, շատ հետաքրքիր է՝ թե ում հետ են ունեցել առաջին հարաբերությունը. այդ հարցին պատասխանում է հետևյալ աղյուսակը։

18-րդ աղյուսակ

Պատասխան	Ամուսնացած	Ամուսնացած չեն	Մանկավարժական ինստիտուտում		Բանվոր		Գյուղաց.		Ընդամենը
			արբ.	իգ.	արբ.	իգ.	արբ.	իգ.	
Կին	8	23	8	—	41	—	85	-	165
Որիորդ	15	15	3	—	25	—	19	—	77
Յերիտասարդ	—	—	—	—	—	3	—	—	3
Պոռնիկ	—	1	2	—	13	—	26	—	42
Ամուսնութ.	2	4	1	2	11	9	10	2	41
Գումար	25	43	14	2	90	12	140	2	328

Մենք նախնթաց աղյուսակից գիտենք, որ ամուսնությունը կազմում է 12,5 տոկոսը. նույնքան է և պոռնիկների հետ ունեցած հարաբերության տոկոսն է։ Մոտ 50 տոկոս կազմում են զանազան կանայք՝ այրի և ամուսին ունեցող։

25 տոկոս կազմում են օրիորդները, մանավանդ գյուղացիական դասակարգից. և դա շատ հասկանալի է. գյուղերում յերիտասարդները հնարավորություն չունեն կանանց, մանավանդ ամուսին ունեցող կանանց մերձենալու։ Բացի այդ, գյուղական կյանքի պայմանները ամուսնացած կնոջը զրկում են ազատությունից, իսկ աղջիկները համեմատաբար ավելի ազատ են. դրա համար էլ յերիտասարդները մերձենում են աղջիկներին և վոչ կանանց.

Իսկ քաղաքում գերակշռող տեղը պատկանում է կանանց, թեև աղջիկներն էլ շատ հետ չեն մնում։

Որիորդներն ու տիկինները ասպարեզից բոլորովին հեռացրել են պոռնիկներին։ Մինչդեռ սրանից մի քանի տարի առաջ պոռնիկները վիտում էին ամենուրեք, այժմ կարծես նրանք անհետացել են. նրանք էլ զին չունեն։ Ի հարկե դա յել հասկանալի է. տիկնայք և որիորդները ամեն տեղ այնքան մատչելի չեն դարձել, որ յերիտասարդությունը գերադասում է մերձեցում ունենալ տիկնանց և որիորդների հետ։ Պոռնիկի հետ հարաբերություն ունենալը թե վտանգավոր է և թե անպատվաբեր. ուստի և նրանց պահանջը չկա, նրանց ցանկացող չկա։

Որիորդներն և թե տիկինները, մանավանդ ամուսին ունեցող կանայք, շնորհիվ իրենց բնատուր կրավորականության կա-

ող են իրենց զսպել, բայց շնորհիվ ապիտության, շնորհիվ վա-
դաստիարակության և սեռական սանձարձակության, գերի չեն
դառնում իրենց սեռական բնազդներին։ Դիմում են բարոյական
անկման և պատճառ դառնում ընտանիքի քայքայման և ցեղ-
այլասերման։

Առաջին հարաբերությունը մի այնքան արտասովոր պա-
տահար է, որ անշուշտ մի վորևե ազդեցություն պետք է թող-
ներ ունեցողի վրա։ Այդ ազդեցությունը, ի հարկե, անդրադառնա-
լու չեր առաջին հերթին այն սեռի վրա, որի հետ չեղել է մեր
ձեցումը. այդ հարցի պատասխանը գտնում ենք հետևյալ աղյու-
սակում։

19-րդ աղյուսակ

Պատասխան	Լամբրեքեն	Հարգարան.	Ցանկալի	Մանկամարդ.		Կամքով		Հարկադրաբար		Ընդամենը
					արս.	իգ.	արս.	իգ.	արս.	իգ.	
Ուժեղացրեց	20	25	10	—	38	—	84	—	177
Պակասեցրեց	1	2	—	—	3	—	4	—	10
Մնաց անփոփոխ	7	11	2	2	23	2	20	—	67
Գումար	28	38	12	2	64	2	108	—	254

Այս հարցն այսպես եր դրված. ինչ ազդեցություն թողեց
առաջին հարաբերությունը դեպի ուրիշ սեռը տածած վերաբեր-
մունքի վրա. 328 հոգի հարաբերություն ունեցողներից պատաս-
խանել են միայն 254 հոգի։

Դրանցից մի քանիսը լավ չեն հասկացել հարցը և գրել են
զզվանք, տելություն, արհամարհանք։ Ցեռ դրանց եկ եմ հաշ-
վել «պակասեցրեց» պատասխանողների թվին։

Առաջին հարաբերությունը, ինչպես մենք տեսնում ենք
թվերից, 177 հոգու սեռական ձգտումը դեպի կինը ավելի ուժե-
զացրել է. այսինքն՝ մոտավորապես 70 տոկոսի մեջ ձգտումը
դեպի կինը ուժեղացել է և միայն չնչին քանակությամբ ան-
ձանց մեջ պակասեցրել է ձգտումը, այսինքն 10 հոգու, որը
կազմում է մոտավորապես 4 տոկոսը, մնացած 67 հոգու վրա վո-
չի ազդեցություն չի թողել։

70 տոկոսի մեջ ձգտումը ուժեղացել է. միանգամայն ճիշ-
պատասխան. ուրիշ կերպ էլ չեր կարող լինել, որովհետև սեռա-

կան ձգտումը այն զգացմունքներին է պատկանում, որ քանի
բավարարում են, այնքան ավելի յի ուժեղանում. իսկ ընդհակա-
ռակը, յերբ թողնում են առանց ուշադրության, նա պակասում է։

Ապա ուրեմն անհրաժեշտ է ժուժկալ լինել. սեռական
առողջապահությունն այդ է պահանջում։

Իսկ մեր յերիտասարդությունը ժուժկալություն չի ընդու-
նում. առաջին հարաբերությունից հետո նա ավելի թափով շա-
րունակում է իր սեռական կյանքը, որը յերևում է հետևյալ
աղյուսակից։

Այս հարցը դրված եր այսպես՝ ունեցել է սեռական հարա-
բերություն հետագայում էլ և ում հետ՝ պոռնկի, որիորդի, թե մի
այլ կնոջ։

20-րդ աղյուսակ

Պատասխան	Լամբրեքեն	Հարգարան.	Ցանկալի	Մանկամարդ.		Կամքով		Հարկադրաբար		Ընդամենը
					արս.	իգ.	արս.	իգ.	արս.	իգ.	
Կանայք	5	12	7	—	30	—	78	—	132
Որիորդ	3	8	1	—	7	—	10	—	29
Պոռնիկ	1	6	3	—	14	—	18	—	42
Ամուսնություն . .	3	4	2	2	7	—	2	—	20
Գումար . .	12	30	13	2	58	—	108	—	223

Այս աղյուսակում աչքի յի ընկնում այն, որ շատերը չեն
պատասխանել, մանավանդ կանայք. բացի այդ՝ ամուսնացածնե-
րը ընդամենը չեն պատասխանել։ Նախընթաց աղյուսակներից գի-
տենք, որ ամուսնացածների թիվը 89 է, դրանցից 20 հոգին է
պատասխանել։

Այս աղյուսակից յերևում է, որ պոռնիկների տոկոսն ա-
վելացել է, համեմատած 18-րդ աղյուսակի հետ։ Դա ցույց է տա-
լիս, որ սեռական ձգտումն այնքան ուժեղացել է, որ յերի-
տասարդն այլևս չի ջոկում, ընտրություն չի կատարում և ա-
ռանց քաշվելու մերձենում է ամեն տեսակի կնոջ, նույն իսկ
պոռնիկին։

18-րդ աղյուսակում պոռնիկները կազմում են 12,5 տոկոսը,
իսկ այստեղ 18,3 տոկոսը։

Իսկ ինչ վերաբերում է չպատասխանողներին, մեզ հետաքրքիր է միայն հավատալ, որ նրանք հետագայում հարաբերություն չեն ունեցել։ Վորքան ճիշտ է այս յենթադրությունը։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն գիտենք, թե ինչպիսի մեծ ազդեցություն ունի թողնում սեռական ձգման վրա արտաքին գործոնները. այդ տեսակետից մեծ նշանակություն պետք է ունենար Հոկտեմբերյան հեղափոխությունը, որը կարելի չի զարգացրել համարել ամեն տեսակ հարցի համար։ Հեղափոխությունը հեղաշրջեց որ թե միայն քաղաքական և սոցիալական կյանքը, այլ և հեղաշրջեց միտքը, ցանկություններն ու զգացմունքները, ի թիվս վորոնց և սեռական զգացմունքը։

Ահա և պատասխանը։

21-րդ աղյուսակ

Պատասխան	Լիովին գոհ	Հիմնապես գոհ	Մանկավարժ. ինստիտուտ		Բանվոր		Հասարակ		Ընդամենը
			արական	իգական	արական	իգական	արական	իգական	
Ուժեղացրել . . .	12	23	5	3	42	3	49	1	138
Պակասեցրել . . .	10	23	4	—	18	2	30	1	88
Մնաց անփոփոխ . .	10	3	5	—	50	2	88	10	168
Գումար . .	32	49	14	3	110	7	167	12	394

Այս հարցը դրված եր այսպես՝ ինչ ազդեցություն է թողել Հոկտ. հեղափոխությունը սեռական զգացմունքի վրա՝ ուժեղացրեց, պակասեցրեց, թե մնաց առանց հետևանքի։

Այս հարցն այնքան հետաքրքրական է յեղել բոլորի համար, որ շատերն են պարտք համարել պատասխանել և 562 հոգուց պատասխանել է 394 հոգի. այսինքն՝ 70 տոկոս։ Այս հարցին պատասխանել են մինչև անգամ այն տեսակ անձնավորություններ, որոնք վոչ մի անգամ հարաբերություն չեն ունեցել. որինակ՝ հարաբերություն ունեցողների ընդհանուր թիվը է 328 (աղյուսակ 15), իսկ այս հարցին պատասխանել են 394 անձ, այսինքն՝ 66 հոգով ավելի։ Բացի այդ, այս հարցը կանանց լեզուն ել է բացել. նախկին հարցերին լռել են, իսկ այս հարցին 22 հոգի պատասխանել են. թեև բոլորը չեն պատասխանել, բայց և այնպես 75 հոգուց 22 կին պատասխանել են։ Չնայած այս բոլորին, ելի մեծ տոկոսը (30) պատասխան չի տվել։

Այս աղյուսակից պարզ յերևում է հեղափոխության **բարերար ազդեցությունը**։

Առհասարակ նկատված է, որ մտավոր լուրջ պարապմունքները պակասեցնում են սեռական ձգման թափը։ Հեղափոխությունը, ինչպես մի լուրջ և մարդուն ամբողջովին կլանող գործոն, պակասեցրել է սեռական զգացմունքը կամ թողել է անհետևանք, որը նույնպես պակասեցնող ազդեցություն պետք է հաշվել. այնպես որ, հեղափոխությունը բարենպաստ կերպով է ազդել 256 հոգու վրա, այսինքն ամբողջի (բոլոր 562-ի) 50 տոկոսի վրա, իսկ այս հարցին պատասխանողներից 65 տոկոսի վրա։

Հեղափոխությունն ուժեղացրել է այն անձանց սեռական ձգումը, որոնք ապրում են միայն սեռականով և, սեռականից բացի, ուրիշ շատ քիչ բանով են հետաքրքրվում։

Ահա այս կարգի անձանց պատասխաններից յերկուսը. մեկը գրում է՝ շատ ուրախ եմ, որ կանայք, ազատության շնորհիվ ավելի մատչելի յեն դառել, իսկ մյուսն անիծում է, որ ինքն ամուսնացած է և զուրկ է մնացել կյանքի վայելքներից. իսկ յերրորդը գրում է՝ «տարորինակ է, մեթե հեղափոխությունը կարող է ազդել սեռական զգացմունքների վրա»։

Ահա թե որպիսի անձանց զգացմունքն է ուժեղացել և դրանք քիչ չեն՝ 138 անձ. կազմում են այս հարցի պատասխանողների 35 տոկոսը։

Պերճախոս թվերը դուրս են կորզել յերիտասարդության հոգու խորքից նրանց իսկական ճշմարիտ ցանկությունը։

Դառնանք մյուս հարցերին։

Սեռական մերձավորության տեսակը պարզելու համար դրված եր հետևյալ հարցը (25-րդ)՝ սեռական մերձավորությունը ժամանակավոր կարճատև եր, թե յերկարատև, կամ թե բոլորովին պատահական։ Այս հարցի պատասխանը մենք ստանում ենք ստորև բերած աղյուսակից։

Պատասխան	Բարոյական գիտակ.	Հասարակական գիտակ.	Ամուսնա-տարի-վարք.		Բնաֆիզիկական		Հարմար դեպք չունենալ		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Պատահական . .	14	20	8	—	44	—	76	—	162
Կարճատև. ժամանակ	6	14	5	1	26	3	35	1	91
Յերկարատև . .	5	11	1	1	9	2	23	1	53
Գումար . .	25	45	14	2	79	5	134	2	306

Այս թվերից մենք տեսնում ենք, վոր ամուսնացած կանայք չեն պատասխանել. աղյուսակ 6-րդից մենք գիտենք, վոր ամուսնացած կանանց թիվը 15-ն է, իսկ պատասխանել են յերկարատև սեռական հարաբերություն ունեցողներ միայն 4 հոգի։ Ինչպես յերևում է լավ չեն հասկացել հարցը։

Այստեղ նկատելի յե, վոր հարաբերություն ունեցողներից (328 հոգի) 91-ը ունեցել են կարճատև, ժամանակավոր մերձավորություն. դա կազմում է 27 տոկոս, իսկ 162 հոգի ունեցել են պատահական մերձավորություն և դա կազմում է 50 տոկոսից ավել։

Սրանից պարզ յերևում է, վոր պատասխան տվող յերիտասարդները սեռական հարցում սեր չեն ունեցել, այլ միայն հետևել են իրենց ստորին ընազդներին և սեռական մերձավորություն ունեցել են ում հետ պատահել և ու միայն քիչ դեպքերում ժամանակավոր կապ են ստեղծել հակառակ սեռի անձի հետ. բայց յերկարատև կապից, որինակ՝ ամուսնությունից, նրանք ամեն կերպ խուսափել են։

Մինչև անգամ կանանց մեջ կան անձինք, վորոնք նույնպես կարճատև մերձավորություն են ունեցել։

Մինչև այժմ հարցերը վերաբերում էին հարաբերություն ունեցողներին, իսկ ինչպես են մտածում հարաբերություն չունեցողները. նրանք ինչ կարծիքի յեն. պատճառն ինչ է, վոր մինչև այժմ հարաբերություն չեն ունեցել. 23-րդ աղյուսակը տալիս է այդ պատասխանը. ահա նա։

Պատասխան	Բարոյական գիտակ.	Հասարակական գիտակ.	Ամուսնա-տարի-վարք.		Բնաֆիզիկական		Պեսա-տարի-տարքեան		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Վեն. ախտ. յերկ. .	14	20	3	—	38	1	49	3	128
Սեռ. պահ. բացակ.	3	2	—	—	9	2	2	11	29
Բարոյականութ. .	4	2	2	4	17	5	26	14	74
Հարմար դեպք չի յեղել	6	—	—	—	12	—	3	—	21
Տնտես. դրութ. .	9	3	1	1	13	1	17	—	45
Ձեռնաշարժություն	—	1	—	—	—	—	—	—	1
Գումար . .	36	28	6	5	89	9	97	28	298

Բավականին անկեղծ պատասխաններ. պատասխանողներից միայն 25 տոկոսը բարոյականության պատճառով չի ունեցել հարաբերություն, իսկ դրանցից ամենալավ պատասխանը տվել է միայն մեկ ուսանող, վորը գրել է՝ «Յես, դիտակցելով սեռական հարաբերության նշանակությունն ու վնասները, ուխտել եմ հեռու մնալ. սիրո և սեռական պահանջ ունեցել եմ և աշխատել եմ զսպել ինձ, շնորհիվ մի ամերիկացի մանկավարժի. նրա շնորհիվ և վերջ տվի ոնանականությանն էլ»։

Մի ուսանող էլ այսպես է բացատրել՝ «գտնում եմ, վոր սեռական հարաբերությունը վաղահասակի վրա վատ ազդեցություն ունի». այդ գրողը 19 տարեկան է, ոնանական չէ և գիշերային սերմնահոսություն սակավ է ունենում։

Աղյուսակի մեջ հիշատակված ձեռնաշարժությամբ պարապողը գրում է՝ «Յես բավարարվում եմ ոնանականությամբ և այդ պատճառով էլ չեմ մտածում այդ ուղղությամբ»։ Ինչ ասել կուզի, վոր սխալ հասկացողություն է և սխալ ուղղություն, սակայն սրա համար նա մեղավոր չէ, իսկական ուղի ցույց տվող չկա և յերիտասարդն անում է այն, ինչ վոր թելադրում է նրա հասկացողությունը։

Սեռական պահանջի բացակայությամբ բացատրողները մեծ մասն ոնանականներն են և այն էլ մոլիներ։ Մի քանի ոնանական ուսանողներ բացատրել են իրենց փոքր հասակով. մինչդեռ

ավելի ճիշտն ոնանականությունն է, վորովհետև գրողները 17 18 և 19 տարեկաններ են։

21 հոգին գրում են՝ «հարմար դեպք չի պատահել». բավականին պարզ խոստովանություն։

45 հոգին ավելորդ ծախս չեն ուզեցել անել, դրա համար, էլ խույս են տվել. դարձյալ անբավարար պատասխան։

Իսկ մեծագույն մասը 128 հոգի, այսինքն 42 տոկոսը՝ վեներական հիվանդություններով վարակվելու յերկյուղից՝ խույս է տվել հարաբերությունից։ Այստեղ էլ բանականությունը չէ, վոր ազդում է և ստիպում է հարաբերությունից հեռու մնալ, այլ ընազդը, յերկյուղը վեներական ախտից։

Մենք այս պատասխաններից տեսնում ենք՝ թե վորքան քիչ զենքեր ունեն պատասխան տվող ուսանողները բարոյականության տեսակետից։ Յեվ իրոք՝ մի մասին կանգնեցնում է սեռական հարաբերությունից վեներական ախտերի յերկյուղը, յերկրորդին գրամական հաշիվը, յերրորդին դիպվածի բացակայությունը, իսկ չորրորդին ձեռնաշարժությունը. և այս բոլորը միասին կազմում են 234 անձ, այսինքն պատասխան տվողների 75 տոկոսը, մի քանակություն, վորի մասին արժե մտածել, յեթե թանկ է յերիտասարդության բարոյական կրթությունը։

Այժմ անցնենք այն հարցին թե՝ ինչ ազդեցություն ունի սեռական մերձավորության բացակայությունը առողջության վրա. նայենք ստորև բերած աղյուսակին.

24-րդ աղյուսակ

Պատասխան	Հիվանդվել կարող է	Հիվանդանալ չի կարող	Մանկավարժ. ինստիտուտում		Բանվոր		Ամուսնացած		Ընդամենը
			ար.	իգ	ար.	իգ.	ար.	իգ	
Վատ	32	18	7	—	42	2	97	3	201
Լավ	1	—	—	—	3	—	4	—	8
Վոչ մի ազդեց . .	7	16	1	6	41	6	35	16	128
Գումար . .	40	34	8	6	86	8	136	19	337

Այս հարցին պատասխանել են 337 հոգի, այսինքն՝ ավելի շատ, քան հարաբերություն ամենևին չունեցողները. սրանից յերևում է, վոր այս հարցին պատասխանել են և այնպիսի անձինք, վորոնք հարաբերություն ունենում են. յերևի կամեցել են արդարացրած լինել իրենց հարաբերություն ունենալը։

Քննենք թվերն ավելի մոտիկից։

Պատասխանողներից 201 հոգու վրա, այսինքն 60 տոկոսի վրա հարաբերության բացակայությունը ազդում է վատ։

Ինչով է արտահայտվում վատ ազդելը. ահա թե ինչպես են բացատրում։

Ներվային զանազան հիվանդություններ՝ անքնություն, գլխացավ, թուլություն, մաքի բթացում, հիշողության դավաճանություն. մեկը գրում է՝ «յերբ մերձավորություն չեմ ունենում, ձեռնաշարժություն եմ անում, իսկ յերբ դա յել չեմ անում, ամորձիքս սկսում են ցավել»։ Յերկրորդը գրում է՝ «յերբ սեռական մերձավորություն չեմ ունենում, հաճախ յերազախաբ եմ լինում»։ Միայն մեկն է ճիշտ մտածված պատասխան տվել, «միայն պարապ ժամանակն է զգալի սեռական մերձավորության բացակայության վնասը».

Թերթելով բոլոր պատասխանները, գալիս ենք այն յեզրակացության, վոր մեծ մասամբ վոչ ժուժկալներն են գանգատվում սեռական մերձավորության բացակայության վնասի համար. բայց իսկական ժուժկալներն ամենևին չեն էլ զգում դրա վնասը։

Յեվ իրոք՝ ահա մի բնորոշ պատասխան ևս. գրողը գյուղացի յե, 22 տարեկան. 18 տ. հասակից սկսել է ոնանականությունը. 19 տարեկանից սկսել է հարաբերություն ունենալ և ունենում է և շարունակ ամեն տեսակի կանանց հետ, բացի որիորդներից, «խղճում է նրանց». սա գրում է, վոր սեռական մերձավորության բացակայությունը խիստ վնասակար է և խորհուրդ է տալիս բացել Յերևանում հասարակաց տուն։ Այս տեսակ ցանկությունուրիշներն էլ են հայտնել, բայց դրանց մասին հետո։

Այստեղ պետք է կրկին անգամ շեշտել, վոր վնասի մասին գանգատվողները մեծ մասամբ վոչ ժուժկալներն են, վորոնք կամեցել են արդարացնել իրենց սեռական ոանձարձակությունը։ Բարոյականության պատճառով ժուժկալները, ուժեղ կամք ունեցողներն ու իրենց զսպողները բոլորն էլ գրում են՝ «վոչ մի ազդեցություն չունի սեռական հարաբերության բացակայությունը»։

Կանանց մեծ մասն այդ կարգին է պատկանում։ Կանանց

բնական կրավորականությունն այս հարցում մեծ դեր է խաղում։

Գալով այն հարցին՝ ֆիատակար է արդյոք սեռական մերձավորության բացակայությունը թե վոչ, պետք է ասենք, վոր գիտությունը վոչ մի ֆաս չի ընդունում։ Միանգամայն սխալ է և սուտ այն կարծիքը՝ թե առողջության համար ֆաս է մերձավորության բացակայությունը։

Կատեգորիապես հայտարարում ենք, վոր մինչև խորին ծերությունը կարելի չէ ապրել առանց հարաբերության և դա վոչ մի ֆաս չի հասցնի առողջությանը։

Միայն դասաիարակությունը, թյուր հասկացողությունը, ագիտությունը, պարապությունը, արհեստական գրգիռները շեղում են յերիտասարդներին բնական ճանապարհից և տանում դեպի ոնանականություն և սեռական անկանոն վարքաժամ մերձեցում։

Սրանից 20 տարի առաջ սեռական հարցով զբաղվող ռուս բժիշկներից մեկը հարց եր առաջարկել 70 ռուս և 130 գերմանական պրոֆեսորների՝ սեռական հարաբերության բացակայության ֆիատակարության մասին և այդ 200 գիտնականներն էլ առանձին, առանձին, բայց միաբերան արտահայտվել են, վոր սեռական մերձավորության բացակայությունը վոչ մի վատ ազդեցություն չունի առողջության վրա։

Ահա այս է իրողությունը։

Յուրաքանչյուր յերիտասարդ, վորը գնահատում է իր, թե ֆիզիքական և թե բարոյական առողջությունը, պարտավոր է քաջ գիտենալ, վոր սեռական մերձավորության բացակայությունը ֆաս չէ կազմվածքի համար, միայն հիվանդ և թուլակամ անձինք կարող են ընդունել, վոր սեռական հարաբերության բացակայությունը ֆասում է իրենց առողջությանը։

Թող ամենքն էլ զեկավարվեն 200 գիտնականների խոսքերով և հետևեն այն ժուժկալ ուսանողներին, վորոնք պատասխանել են՝ թե սեռական մերձավորության բացակայությունը վոչ մի ազդեցություն չունի իրենց առողջության վրա. կամ թող լավ հետևեն այն ուսանողի խոսքերին (վերը բերածս)՝ «միայն պարապ ժամանակն է զգալի սեռական մերձավորության բացակայության ֆասը։»

Ֆիզիքական և մտավոր զբաղմունք—ահա միակ միջոցը սեռական մերձավորության բացակայության ֆասի դեմ։

Մեզնից շատ դարեր առաջ, յերբ մարդիկ ապրում եյին ցեղերով և իրենց ամբողջ ժամանակը գործ եյին գնում կերակուր ճարելու համար, կռիվ եյին մղում սնունդի համար, թե իրենց նմանների և թե գազանների հետ, սեռական գործարանները գործում եյին տարվա մեջ վորոշ ժամանակ, ինչպես այժմ շատ վայրենիների մեջ և ինչպես մյուս կենդանիներն են այժմ։

Տեսակի պահպանման բնական որենքի ազդեցության տակ մարդիկ զուգավորվում եյին, թողնելով ցեղի հոգին ժառանգը, իսկ իրենք, այդ ժամանակն անցնելուց հետո, զարձյալ բաժանվում եյին ու շարունակում կեր ճարելու աշխատանքը։

Գիտությունն ու տեխնիկան ամեն ինչ փոխեցին։ Փոխեցին գոյության կռվի պայմանները, փոխվեց և ինքը մարդը. փոխվեց և նրա գործարանների բնախոսական աշխատանքը. և ասենք՝ նաբար փոխվելով, մարդն ստացավ անբնական հատկություններ. այդ հատկությունները ժառանգաբար անցան սերնդից սերունդ։ Յեվ մարդը հասավ արդի դրությանը՝ ոժված ամեն տեսակ պակասություններով, կրքերով և փչացած հակումներով, վորոնց մեջ առաջին տեղը բռնում է սեռական ձգտումն ու նրա բավարարումը։

Մարդու գլխի ուղեղի մեջ զետեղված են զանազան գործունեության համար համապատասխան ներվային բջիջներ, վորոնք կենտրոններ են կոչվում. այդ կենտրոնները կապ ունեն միմյանց հետ և սկսում են գործել, յերբ գրգռվում են այս կամ այն պատճառով։ Մարդու ամբողջ գործունեությունը կախված է այդ կենտրոնների գործունեությունից։ Մարդու ամբողջ կյանքը անդրադարձային գործողություն է։ Արտաքին աշխարհի յերևույթներն ազդում են մարդու կազմվածքի գործարանների վրա։ Զգացող ներվերի միջոցով այդ ազդեցությունները հասնում են, գլխի ուղեղի կենտրոններին։ Այդ կենտրոնները գրգռվում են բայց նրանցից ամենաշատ գրգռվում է այն, վորին վերաբերում է գրգիռը. այդ կենտրոնը արձակում է հրաման գործողության, վորը և կատարվում է շարժական ներվերի միջոցով։

Գլխի ուղեղի կենտրոնները գրգռվում են և ներգատող գեղձերի արտազրած դատուցքներով։ Սեռական գեղձերի՝ դատուցքը հորմոնը նույնպես ընդունակ է գրգռելու գլխի ուղեղի կենտրոնները և ամենից շատ գրգռում է ի հարկե սեռական կենտրոնը, վորը և գրգռվելուց հետո ստիպում է մարդուն կատարել սեռական գործողություն։

Մարդու բոլոր գործողություններն այդ ճանապարհով են կատարվում. սեռական գործողությունն էլ նույնպես, ուստի սեռական գործողությունն էլ պատկանում է անդրադարձային գործողությունների թվին։ (Կան և ուրիշ թեորիաներ այդ հարցի մասին, բայց տեղը չի դրանով զբաղվելու)։

Սեռական զատուցքները (աղամարդու և կնոջ), գրգռելով ուղեղի կենտրոնները, դարձնում են մարդուն աշխատունակ և իրոք այն անձինք, որոնք զրկված են հորմոններից, անընդունակ են թե ֆիզիքապես և թե մտավորապես։ Սեռական անկարգ գործողությունները, այսինքն սեռական գործարանների ի չքը գործ դնելը, զրկում է կազմվածքը հորմոններից, այդ զորեղ խթանից, և մարդ հետզհետե թուլանում է ու քայքայվում։

Այս քայքայումն ավելի ուժեղ է լինում այն ժամանակ, երբը կազմվածքը կատարելապես զարգացած չէ։ Կազմվածքի իսկական հասունության ժամանակ, այսինքն 25 տարին լրանալուց հետո, ներզատող գեղձերն սկսում են գործել ներդաշնակ, գրգռում են գլխի ուղեղի կենտրոնները հավասար չափով և մարդու գործողություններին տալիս են համաչափություն և ներդաշնակություն։

Գլխի ուղեղի կենտրոնների այդ ներդաշնակ գործողության պատճառը կայանում է նրանում, որ շատ գրգռվող կենտրոնն արգելակ է հանդիսանում մյուս կենտրոնների համար։ Սեռական կենտրոնի ամենալավ արգելակը մտավոր և ֆիզիքական աշխատանքի կենտրոններն են։ Չափավոր կերպով գրգռելով այդ կենտրոնները, կարելի է թուլացնել սեռական կենտրոնի թափը. իսկ ուժեղ գրգռումները կարող են ամենևին լռեցնել սեռական կենտրոնի գործողությունը. նույնը կըլինի և հակառակ դեպքում. սեռական կենտրոնի ուժեղ գրգռումները թուլացնում են մյուս կենտրոնների գործողությունը։

Այս բոլորից յեզրակացնում ենք, որ կազմվածքի բնական կյանքի համար անկարգ և չափից դուրս, մանավանդ վաղաժամ, սեռական գործունեությունը շատ վնասակար է։ Սեռական հորմոնների շռայլորեն վատնումը քայքայում է կազմվածքը, իսկ ընդհակառակը, նրանց խնայողությունը, տալիս է ուղեղի մյուս կենտրոններին ևս ուժ ու կարողություն ավելի

զորեղ գործելու և ավելի արտադրական աշխատանք կատարելու համար։

Գյոթե, Բայրոն, Պուշկին, շատ զորեղ են յեղել սեռական տեսակետից և շնորհիվ իրենց սեռական հորմոնների հետ խնայողաբար վարվելուն՝ կարողացել են մեծ թափով ստեղծագործական աշխատանք կատարել, իսկ յեթե նրանք տարվեին միայն սեռական գործունեությամբ, այն ժամանակ ի վիճակի չեին լինի ուժեղ ստեղծագործական աշխատանք կատարել և կորսյան ենթարկված կը լինեին իրենց, ինչպես կորած են շատ շատերը։

Դիմենք մեր նյութի շարունակությանը։

Անցնենք այժմ ամուսնացածներին, հետաքրքրվենք և նրանց սեռական կյանքով։ Մենք 6-րդ աղյուսակից գիտենք, որ ամուսնացածների թիվը 89-ն, այսինքն բոլոր պատասխանողների 15,5 տոկոսը։ Վո՞ր հասակումն են ամուսնացել և վո՞րքան լուրջ են վերաբերվել իրենց այդ մեծ քայլին. թող խոսեն թվերը։

(Տես 25-րդ աղյուսակը, հետևյալ յերես)

25-րդ աղյուսակ

Տարիք	Միայնակ կանայք	Միայնակ տղամարդիկ	Ամուսնացած կանայք		Ամուսնացած տղամարդիկ		Ընդամենը		Ընդամենը
			արական	իգական	արական	իգական	արական	իգական	
16	—	—	—	—	—	1	—	—	1
17	—	—	—	—	2	1	—	—	3
18	2	1	—	—	4	2	—	1	10
19	1	1	—	—	1	3	—	—	6
20	2	—	—	—	2	2	1	—	7
21	—	1	—	—	2	—	3	2	8
22	—	1	—	—	2	—	1	—	4
23	—	4	1	1	6	—	4	—	16
24	—	1	—	1	6	—	6	—	14
25	—	2	—	—	5	—	2	1	10
26	—	—	—	—	—	—	2	—	2
27	—	—	—	—	1	—	2	—	3
28	—	—	1	—	1	—	—	—	2
29	—	—	—	—	—	—	—	—	—
30	—	—	—	—	—	—	1	—	1
Բարձր	—	—	1	—	1	—	—	—	2
Գում.	5	11	3	2	33	9	22	4	89

89 ամուսնացողներից 15-ը կին են, իսկ մնացածները տղամարդիկ։

Պետք է ասել, որ թե կանայք և թե տղամարդիկ վաղ են ամուսնանում. կանանց իսկական հասունությունը 20-22 տարին է, իսկ տղամարդկանցը 23-25 տարեկան հասակն է. մեր խոսքը սեռական հարաբերության մասին չէ, այլ ֆիզիկական կազմի կատարելապես զարգանալու մասին է։

Այդ հասակումն է վոսկրամկանունքային համակարգությունը կատարելապես զարգանում, այդ հասակումն են ներդատող գեղձերը ներդաշնակ գործում և, վերջապես, այդ հասակումն են զարգանում և իրենց կատարելությանը հասնում զլխի ուղեղի զսպիչ կենտրոնները։

Վաղաժամ ամուսնության դեպքերն ավելի հաճախ են գյուղացիների մեջ. գյուղացիք վոչ այնքան սեռական բավարարության, կամ ժառանգ ունենալու համար են վաղ ամուսնանում, վորքան տան բանող ձեռքն ավելացնելու նպատակով, այսինքն՝ տնտեսական պատճառներով։

Վաղաժամ ամուսնությունը նույնպես վտանգավոր է ամուսնացողների համար, ինչպես և վոչ ամուսնացողների սեռական մերձավորությունը. այդ տեսակ զույգերի ժառանգները թույլ, վատառողջ և հիվանդոտ են լինում։

Ամուսնացողներից մի քանիսը 2-3 անգամ են ամուսնացել. կան այնպիսիները, վորոնց ամուսնությունը շատ կարճ է տևել, մանավանդ յերիտասարդ հասակում ամուսնացողներինը։

Բայց պատճառն ինչ է, վոր մյուսները չեն ամուսնացել. այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք հետևյալ աղյուսակում։

26-րդ աղյուսակ

Պատասխան	Միայնակ կանայք	Միայնակ տղամարդիկ	Ամուսնացած տղամարդիկ		Բանվոր		Գյուղացի		Ընդամենը
			արական	իգական	արական	իգական	արական	իգական	
Տնտես. դրութ.	32	28	10	—	65	1	67	1	204
Աղատ. չի կամենալ զրկվել	5	7	—	—	15	4	42	11	84
Չի պատահել	—	—	—	—	6	—	6	1	13
Ուսման պատճ.	3	5	2	—	16	4	26	6	62
Անչափաս.	—	2	—	—	20	—	10	—	32
Չի կարող սիրել	—	1	—	5	—	2	23	12	43
Տկարություն (սեռական)	1	1	—	—	5	—	1	—	8
Խանդի պատճ.	—	—	—	—	1	—	—	—	1
Գումար	41	44	12	5	128	11	175	31	447

Այս թվերից մենք իմանում ենք, վոր 447 պատասխանողներից 204 հոգին չի ամուսնացած տնտեսական պատճառներով. դա կազմում է 44 տոկոս. դրանից հետո գալիս են ազատությունից զրկվել չցանկացողները՝ 84 անձ, այսինքն 18 տոկոս. ուսման պատճառով չեն ամուսնացել 62 անձ — 14 տոկոս։

Այս պատճառների մեջ հետաքրքրականը տկարությունն է. այս պատասխան տվողները 8 հոգի չեն, բոլորն էլ աղամարդ, բոլորն էլ գանգատվում են սեռական գործարանների թուլությունից. դրանք բոլորն էլ ոնանականներ են։

Հետևյալ հարցն ավելի յն պարզում ուսանողների սեռական կյանքի մասին ունեցած հասկացողությունը։ Հարցն այսպես է դրված՝ սեռական վորպիսի մերձավորություն է գերադասում. ահա և պատասխանը.

27-րդ աղյուսակ

Պատասխան	Միայնակ կարդալ	Հրամանատ. դպրոց	Մանկավարժ. ինստիտուտ		Ընդհանուր		Հարավ. գավառ		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Ամուսնութ. . .	19	17	7	4	48	8	93	19	215
Ցերկար. սեր . .	13	13	5	2	32	2	51	8	126
Կարճատև . . .	2	4	1	—	10	1	24	1	43
Պատահական . .	3	11	1	—	8	—	20	—	43
Պոռնկային . . .	—	—	—	—	1	—	2	—	3
Վոչ մի	2	2	—	—	6	1	—	3	14
Գումար . .	39	47	14	6	105	12	190	31	444

Վերլուծելով թվերը, մենք տեսնում ենք, որ պատասխանողներից 50 տոկոսը ցանկանում է ամուսնություն, բայց վերը բերված պատճառներից տխրված, չի կարողանում ի կատար ածել այդ ցանկությունը. 28 տոկոսը ցանկանում է յերկարատև սեռային կապ և զարմանալին այն է, որ այդ պատասխան տվողների մեծ մասն աղատությունից զրկվել չցանկացողներն են։ Բայց միևնույն ժամանակ բավական մեծ տոկոս են կազմում պատահական մերձավորություն ցանկացողները՝ 10 տոկոս նույնքան և կարճատև. և միայն 3 տոկոսը չի ցանկանում ունենալ սեռական մերձավորություն։ Կան և անձինք, որոնք մինչև անգամ ջատագով են պոռնկային մերձավորության. դրանք 3 հոգի չեն։

15-րդ աղյուսակից մենք գիտենք, որ 234 անձ բոլորովին չեն ունեցել սեռական մերձավորություն. այս աղյուսակից մենք տեսնում ենք, որ միայն 14 հոգի չեն սկզբունքով հակառակ մերձավորության, իսկ մնացածները պատրաստ են ունենալու մերձավորություն, յեթե զանազան արտաքին պայմաններ արգելք չը հանդիսանան։ Այս թվերից մենք յեզրակացնում ենք, որ պատասխանողների 50 տոկոսը ցանկանում է ունենալ այնպիսի մերձավորություն, որ պարտականություններ չը դնի իր վրա։

Այս հարցին 2 ամուսնացածներ տվել են հետաքրքրական պատասխան, որ բնորոշ է սեռական սանձարձակության տեսակետից։ Մեկը գրում է՝ «թեև ամուսնացած եմ, բայց գերադասում եմ պատահականը». իսկ յերկրորդը գրում է՝ «լավ է ամուսնությունը, բայց չի խանգարում և պատահականը»։ Բավական անկեղծ խոստովանություն, բայց միևնույն ժամանակ և ցինիկ պատասխան։

Իբրև հաստատումն սեռական սանձարձակության, մենք կարող ենք ցույց տալ հետևյալ 32-րդ հարցի պատասխանի վրա, որից մենք տեղեկանում ենք հետևյալը. կան ամուսնացած աղամարդիկ, որոնք ամուսնությունից դուրս ևս ունենում են հարաբերություն. այս հարցին կանայք շատ հասկանալի պատճառով չեն պատասխանել. իսկ աղամարդկանցից պատասխանել են միայն 4 հոգի.— 74 հոգի ամուսնացած աղամարդկանցից 4 հոգի ամուսնությունից դուրս ևս ունեցել են սեռական մերձավորություն. դա կազմում է 5,6 տոկոս. մենք այս թիվը քիչ ենք գտնում. մեր կարծիքով ավելի շատ է ամուսնականը կապը խախտողների թիվը. մեծ մասը բարվոք է համարել լռել։

Անցնում ենք ամենահետաքրքրական հարցին. հիվանդացել է արդյոք վեներական վորևե տեսակով։ Այս հետաքրքրական հարցին 562 հոգուց պատասխանել է միայն 50 հոգի, որը բոլորովին չի համապատասխանում իրողությանը։ մենք անձամբ ճանաչում ենք ուսանողների, որոնք հիվանդ՝ են թե սուսանակով և թե սիֆիլիսով և գիտենք, որ այդ հիվանդները բոլորովին թերթ չեն տվել։

Նրանք պետք է լավ իմանային, որ այդ պատասխանները նշանակություն ունեն միայն և միայն իբրև վիճակագրական տվյալներ, որ այդ տեղեկությունները ժողովում ենք մենք վոչ անձնական օգուտի համար, այլ գիտական նպատակով։

Չպատասխանող ուսանողները միայն մեկ արդարացուցիչ հանգամանք ունեն. դա այն է, որ այս տեսակ հարցման թերթ, այս տեսակ տեղեկություններ, ժողովվում են առաջին անգամ։

Մենք հուսով ենք, որ այս աշխատանքը լույս տեսնելուց հետո կարդացող հիվանդ ուսանողները, յեթե նորից հարկ լինի տեղեկություն ժողովելու միևնույն հարցման թերթով, անշուշտ չեն թագցնի իրենց հիվանդությունը և ճիշտ պատասխաններ կտան։

Պատասխան ավողներից 20-ը հիվանդ է յեղել գոնորրեյով (տրիպերով), իսկ 10-ը փափուկ շանկրով. պետք է ասել, որ 1918 թվից սկսած փափուկ շանկր շատ քիչ է յերևում։ Շատ հաճախ փափուկ շանկրը շփոթում են կարծրի հետ և դրականապես կարելի յե ասել, որ փափուկ շանկրն առանձին, այժմ, շատ հազվագյուտ է. նա միշտ լինում է կարծրի հետ միասին. դրա համար ել թե հիվանդանոցներում, թե բուժարաններում և թե մասնավոր պրակտիկայում փափուկ շանկրը հատ հատ է յերևում։

Վարակումը տեղի յե ունենում խառը, այսինքն՝ փափուկ շանկրով վարակվողը մեծ մասամբ և կոշտ շանկր է ստանում. յերկու շանկրի թույնը, մտնելով մի որ և միևնույն տեղից, առաջ է բերում վարակում, բայց վորովհետև փափուկ շանկրի նշանները չնչին են և կորչում են կոշտ շանկրի նշանների մեջ, դրա համար ել փափուկ շանկրը աչքի չի ընկնում և անցնում է մեջ՝ պրակտիկ բժիշկներիս համար աննկատելի. գուցե կլինիկական հիվանդանոցներում կարելի լինի հետևել փափուկ շանկրի յերևալուն և ընթացքին, բայց բուժարանում և մասնավոր պրակտիկայում դա դժվար է։

Յեվ այդ տեսակետից զարմանալի յե, որ փափուկ շանկրով հիվանդացածների թիվը 10 հոգի յե. դժվար հավատալի բան է, որ 10 հոգի փափուկ շանկր ունեցած լինեն. ինչ է է, այդ են թվերը։

Անցնենք պատասխանին. վարակվածների մեծ մասը ամուրիներ են 20-22 տարեկան. դրանք ունեցել են հարաբերություն ամեն տեսակ կանանց հետ։ Այդ հիվանդներից միայն մեկն է անկեղծ գրում, որ մինչև այժմ ել տառապում է սուսանակից և միայն մեկն է գրում, թե վարակել է փափուկ շանկրով մի կնոջ։

Այս պատասխանողներից միայն մեկ ամուսնացած տղամարդ ամուսնու բացակայության ժամանակ ունեցել է հարաբերություն ուրիշների հետ և վարակվել է սուսանակով (գոնորրեյով)։

Իսկ կանայք, ի հարկ է, ըստ իրենց սովորության, լռելյայն են անցել այս հարցը։

Վիներական հիվանդություն ունեցողները բոլորն ել գրել են, թե բժշկվել են վիրջնականապես, բացի յերկուսից, որոնք հիվանդ են սուսանակով և գրել են՝ «կիսատ». դրանցից մեկը մինչև անգամ գրել է՝ «տեսական սուսանակից բժշկություն չկա»։

Յուրաքանչյուր անհատ պիտի լավ գիտենա, որ բժշկության ոգուտը հիվանդության կանխելու մեջն է. ամեն մարդ պետք է այնպես ապրի, որ չը հիվանդանա. ամեն մարդ, մանավանդ հասունացած մարդ, պետք է գիտակցություն ունենա զսպել իրեն և հարաբերություն չունենալ, որ չը վարակվի, իսկ վարակվածն ել պետք է գիտակցություն ունենա գործ դնել ամեն տեսակ միջոցներ ազատվելու ախտից. բոլոր վիներական ախտերն ել բուժելի յեն, յեթե բուժումը կատարվում է իր ժամանակին և ըստ պատշաճի. հակառակ պարագայում նրանք՝ այդ ախտերը, թողնում են ծանր հետևանքներ, զանազան խանգարումներ, որոնք մնում են հիվանդի մեջ մինչև նրա մահը։

28-րդ աղյուսակը լավ ապացուցում է մեր միտքը. ահա նա.

28-րդ աղյուսակ

Պատասխան	Կամայական	Հարկադրաբար	Ամուսնի.		Կանանց		Չամուսնացած		Միասին
			արական	իգական	արական	իգական	արական	իգական	
Սեռական թույլութ.	1	2	1	—	1	—	6	—	11
Ամորձիքի ուռուցք	1	—	—	—	1	—	1	—	3
Միզարգելութ.	—	—	—	—	1	—	—	—	1
Սերմահոսութ.	—	—	—	—	—	—	1	—	1
Ամորձ. յերակների լայնացում	—	—	—	—	—	—	1	—	1
Սերմի արագ ժայթքում	—	—	—	—	—	—	1	—	1
Արգանդաբորբոք	—	—	—	1	—	—	—	—	1
Դաշտանացավ	—	—	—	—	—	1	—	—	1
Գումար.	2	2	1	1	3	1	10	—	20

Հարցն այսպես էր դրված՝ ունի արդյոք սեռական գործարանների տկարություն։ Այս հարցին կանայք էլ են պատասխանել. ի հարկե դրանց տկարությունները վեներական ախտերից չեն առաջացած, բայց տղամարդկանց տկարությունները բոլորն էլ սուսանակի հետևանք են։ Զպետք է մոռանալ, որ այս թվերը լրիվ չեն, մեծ մասը թաքցրել է իր հիվանդությունների մասին. բայց այս փոքրիկ աղյուսակն էլ բավականաչափ պատկերացնում է՝ թե ինչ զանազան հիվանդություններ ունեն մեր ուսանողները։

Շատ ուսանողներ բոլորովին անտեղի գանգատվել են իրենց սեռական ուժեղ ձգման համար. դրանք մեծ մասամբ վեներական ախտերի հիվանդներ են, կամ ոնանականներ, կամ սեռական գործարաններն ի չարը գործ ունողներ։ Այս վերջիններին պետք է լավ իմանան, որ սեռական գործարանները շատ գործադրելով՝ ավելի շատացնում է ցանկությունը, ուստի, որպեսզի չը տառապեն սեռական ուժեղ ձգտումից, պետք է աշխատեն որքան կարելի է քիչ բավարարել. հակառակ դեպքում մարդը սեռական գործարանների գերին կը դառնա։

Այս բոլոր պատասխաններից հետո ըստինքյան ծագում է հետևյալ հարցը. արդյոք տեղեկություն ունեն ուսանողները, որ վտանգավոր և անկարգ հարաբերությունը և, եթե ունեն տեղեկություն, ումից են ստացել այդ։

29-րդ աղյուսակ

Պատասխան	Լոմբրոզոյով	Ֆրանսերեն	Ցանկ.		Ֆրանսերեն		Լոմբրոզոյ		Ընդամենը
			ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Գրքերից	18	21	11	1	57	11	111	17	247
Ընկերներից	3	10	1	—	40	4	29	2	89
Ծնողներից	2	3	—	—	4	2	2	2	15
Ուսուցիչներից	9	7	2	—	6	—	16	3	43
Բժիշկներից	5	3	—	—	2	—	2	—	12
Ինքնաբերաբար	—	—	—	—	4	—	1	—	5
Անձնակ. փորձ	—	—	—	—	—	—	2	—	2
Կինոյից	—	—	—	—	1	—	—	—	1
Վոչինչ չը գիտեմ	3	7	—	—	33	1	18	3	65
Գումար	40	51	14	1	147	18	181	27	479

Այս թվերը մեզ ասում են, որ սեռական անկարգ և անկանոն հարաբերության մասին պատասխանողներից 50 տոկոսից ավելին գիտեր գրքերից, մոտ 17 տոկոսն ընկերներից, իսկ 13 տոկոսը վոչինչ չգիտեր. նա վոչ մի հասկացողություն չուներ՝ թե վորքան վտանգավոր է վաղաժամ և չափից դուրս հաճախ հարաբերությունը։

Յուվ ցավոք սրտի պետք է ասենք, որ մենք բժիշկներս ամենավերջին տեղն ենք բռնում այս հարցի մասին տեղեկություն տալու մեջ։

Մինչև այս հարցը տված պատասխաններից պարզ յերևում է՝ թե ինչ հասկացողություն են ստացել Յերևանի ուսանողները սեռական հարցի մասին իրենց ընկերներից և կարդացած գրքերից. ճշմարիտ ուղի ցույց տվողները մենք բժիշկներս պետք է լինենք, բայց ամենավերջին տեղն ենք բռնում։

Ծնողներն ի վիճակի չեն, ուսուցիչները տեղյակ չեն, բժիշկներս էլ քիչ ենք հետաքրքրվում, ապա ուրեմ դիմի յերիտասարդությունը. նա պետք է դիմի գրքերին և ընկերներին։ Սրանք էլ սխալ ուղղություն են տալիս. ուրեմն մնում է այն, որ յերիտասարդությունը կամ ինքնաբերաբար հասկանա ապառնացող վտանգը, կամ անձնական փորձով. յերկուսն էլ վատ հետևանքներ են ծնում։

Անձնական փորձով իմացողներն յերկու հոգի յեն. ի հարկե, դրանք շատ են, բայց չեն պատասխանել։ Այդ յերկուսից մեկը գրել է՝ «չգիտեյի, իմացա, յերբ առողջությունս քայքայվեց». Իսկ յերկրորդը գրել է՝ «լավ կը լիներ, որ Բանֆակում շաբաթը մի անգամ դասախոսեն սեռական հարցի մասին։»

Շատ կարճ են գրել, բայց այդ յեվս բավական է, որ պարզ լինի մեզ իրերի դրությունը։ Քանի՞ քանիսն են զրանց որին։

Դրանից հետո զարմանալի չի, որ կան հետևյալ պատասխանները։

Մեկը գրում է՝ «անկանոն հարաբերությունը վնաս է. յես միայն գիտեմ, որ հիվանդ կանանց հետ ունենալն է վտանգավոր, իսկ առողջ կանանց հետ շատ զվարճալի յե»։ Այս գրողը 34 տարեկան ամուրի տղամարդ է, որը առաջին հարաբերությունն ունեցել է բավական վաղ, մի գյուղացու աղջկա հետ և շարունակ ունենում է մերձավորություն ամեն տեսակ կանանց հետ։ Յերկրորդը գրում է՝ «գիտեմ, բայց հարաբերության ժամանակ մոռանում եմ»։ Յերրորդը գրում է՝ «գիտեմ, բայց զրգիռի ժամանակ վոչինչ չգիտեմ»։ Իսկ չորրորդը գրում է՝ «յես լավ գիտեմ,

Բայց դա ինձ չի վերաբերում, վորովհետև՝ յեթե ամեն որ հարաբերություն չունենամ, կը հիվանդանամ»։ Այս գրողը 26 տարեկան ամուսնացած յերիտասարդ է. 10 տարեկան հասակից սկսել է թե ոնանականությունը և թե սեռական հարաբերությունն աղջիկների հետ. հետագայում ել շարունակել է հարաբերությունն ամեն տեսակ կանանց հետ, մինչև անգամ ամուսնությունից դուրս ել ունենում է մերձավորություն ուրիշ կանանց հետ։

Ահա թե ինչ տեսակ անձինք կան Յերևանի ուսանողության մեջ և վորքան սխալ ընթացք է տված սեռական հարցին։

Մենք լավ գիտենք, վոր միշտ ել կարելի յե գտել. վոր հարաբերություն չունենալը վոչ մի վտանգ և վոչ մի վնաս չի սպառնում առողջությանը, իսկ կրքերի և սեռական ցանկությանը դեռի դարձած յերիտասարդը միայն առողջությունը քայքայելուց հետո յե հասկանալու։

Մենք մինչև այժմ ծանոթացանք Յերևանի ուսանողության սեռական կյանքի հետ. մենք գիտենք՝ թե ով և մեզ պատասխանող յերիտասարդությունը, ինչպես և ընթանում նրա սեռական կյանքը, և այլն։

Այս բոլորից հետո ինքն ըստ ինքյան հարց և ծագում՝ ուրից է ստացել յերիտասարդությունը սեռական կյանքի մասին տեղեկություն։

30-րդ աղյուսակ

Պատասխան	Դասագրքերից	Հրամանագրերից	Մանկավարժ. ինստիտուտ		Բանվորակ		Համալսարան		Ընդամենը
			ար.	իգ.	ար	իգ.	ար.	իգ.	
Գրքերից	15	18	8	6	51	13	105	20	236
Ընկերներից	19	28	3	1	78	5	77	9	220
Ծնողներից	—	1	—	—	2	2	3	1	9
Ուսուցիչներից	7	3	1	—	8		10	6	35
Բժիշկներից	2	1	—	—	—	—	—	—	3
Ինքնաբերաբար	—	—	—	—	3	—	1	—	4
Անձնական փորձ	—	—	-	—	—	—	4	—	4
Կինոյից	—	—	—	—	1	—	—	—	1
Վոչինչ չգիտի	—	2	—	1	10	1	2	1	17
Գումար	43	53	12	8	153	21	202	37	529

Ահա մի հարց, վորին միայն 33 հոգի վոչինչ չեն պատասխանել։ Այս թվերն ել տանում են մեզ տխուր յեզրակացության։

Սեռական կյանքի մասին առատ նյութ տվողները գրքերն են ու ընկերները. պատասխանողներից 84 տոկոսը այդ աղբյուրներից է ստացել իր տեղեկությունը. աղջիկներն ավելի շատ են կարդում, քան տղաները. միայն ինքը հոգի յեն ծնողներից իմացել, 35 հոգի յել ուսուցիչներից. բժիշկներից 3 հոգի. ցավալի, թե խայտառակ անվանենք այդ գրությունը։

Յերիտասարդությունը սեռական ծով հարցում տատանվում է առանց ղեկի, ապա ուրեմն զարմանալի չեն նրա սխալ քայլերն ու անձարձակությունը։

Այս հարցի պատասխանների մեջ կան հետևյալ գարձվածքները. 1) «ուսուցիչները վոչինչ չեն ասում, խնայել եմ գրքերից» 2) «իմացել եմ ամենքից՝ բացի ծնողներից» 3) «ինարկե, վոչ ծնողներից»։

Յերիտասարդությունը հետաքրքրվում է սեռական հարցով, կարդում է ամեն տեսակ գրքեր, բայց գրականությունն առանց մեկնարանության, առանց բացատրության՝ յերբեմն ել հակառակ ազդեցություն է թողնում. միայն բժշկի գիտական խոսքը կարող է ճշմարիտ ուղու վրա դնել այդ հարցը և սեռական անձարձակության առաջն առնել։

ԿԱՆԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մինչև այժմ մենք ծանոթացանք Յերևանի յերիտասարդության սեռական կյանքի հետ, բայց մեր ուսումնասիրությունը լրիվ չեր լինի, յեթե չցանկանայինք ծանոթանալ կանանց առանձնահատկություններին։

Մինչև այժմ թե տղամարդկանց և թե կանանց սեռական կյանքի վերաբերյալ տված հարցերն ու պատասխանները ընթանում են զուգընթացաբար, բայց կանայք բնությունից ոժտված են այն տեսակ հատկություններով, վոր բոլորովին տարբերվում են տղամարդկանցից։

Այդ առանձնահատկությունները դնում են իրենց կնիքը կնոջ վոչ թե միայն սեռական կյանքի, այլ ամբողջ ֆիզիքական և հոգեկան աշխարհի վրա։

Եվ այս հարցում առաջին տեղը պատկանում է դաշտանին։

Դեռ բոլորովին չհասունացած՝ աղջկա սեռական գործարանները հանկարծ սկսում են գործել և անհագին փոփոխություն մրցնում նրա կյանքի մեջ ու այդ որվանից աղջիկը գնալով փոխվում է և մտնում է կյանքի նոր ընթացքի մեջ։ Մեր հարցերին 75 կին է պատասխանել, հետաքրքիր է՝ ում դաշտանը յերբ է սկսվել։

31-րդ աղյուսակ

Տարիք	Մանկամարդ.	Կանգուն	Կատարյալ կատարյալ	Ընդամենը
8	—	—	1	1
12	—	—	3	3
13	—	2	7	9
14	1	2	11	14
15	3	12	11	26
16	3	6	6	15
17	1	1	2	4
18	—	—	2	2
19	—	—	—	—
20	—	1	—	1
Գումար.	8	24	43	75

Այս թվերը մեզ ցույց են տալիս, որ պատասխանող կանանցից 55 հոգին՝ այսինքն 73 տոկոսն ունեցել է դաշտան 14-16 տարեկան հասակում, որը և բնական կարելի յե համարել։

Այդ հասակից առաջ ունեցել են դաշտան 13 հոգի, որոնցից միայն 4 անձ վաղաժամ են ունեցել. իսկ 6 հոգի յել դաշտանն ունեցել են 16 տարուց հետո և դրանց դաշտանը ուշացել է։

Ամենավաղ դաշտանը 8 տարեկան ժամանակն է, որն ունեցել է միայն մեկ անձ, իսկ ամենաուշը 20 տարեկան հասակն է, որը նույնպես մեկ անձ է ունեցել։

Մոսկվայի ուսանողուհիների պատասխանների մեջ 13 տարուց վաղ դաշտան ունեցող չկա, իսկ 19 տարեկանից հետո ունեցողները կազմել են 0,9 տոկոս, որպիսի տոկոսային հարաբերությունը տեսնում ենք և մեզնում։

Ինչ կապ կա սեռական զգացմունքի և դաշտանի մեջ. այս հարցը պարզելը շատ դժվար է, որովհետև մեր ուսանողուհիներից 50 հոգի պատասխանել են՝ թե չեն հիշում, որ հասակում յերևացին սեռական ձգտման նշանները։ Մնացած 25 հոգուց 13 հոգու դաշտանը և սեռական զգացմունքը հայտնաբերվել են միևնույն տարում. իսկ 12 հոգուց չորսինը սեռական զգացմունքը հայտնաբերվել է դաշտանից առաջ և 8 հոգունը դաշտանից հետո։

Դաշտանից առաջ թե հետո յերևան յեկած սեռական զգացմունքի տոկոսային հարաբերությունը Յերևանի և Մոսկվայի ուսանողության մեջ հավասար թե մեկ է. Մոսկվայի ուսանողուհիների պատասխաններում դաշտանից հետո հայտնաբերված զգացմունքի տոկոսը մոտավորապես յերկու անգամ ավել է դաշտանից առաջ հայտնաբերված սեռական զգացմունքի տոկոսից, նույնը և Յերևանի ուսանողուհիներինը։ Ահա մի նմուշ կնոջ սեռական կյանքի աններդաշնակության. սեռական գործարաններն սկսել են գործել, իսկ զգացմունքը դեռ չկա։

Դաշտանի շատ ուշանալու պատճառը ապրուստի վատ պայմաններն են յեղել։

Դաշտանի յերևալը շատերին շփոթեցնում է և հուզմունքի մեջ ձգում. 75 կանանցից միայն 65 հոգին և պատասխանել «դաշտանի թողած ազդեցությունը» հարցին. այդ 65 հոգուց 28-ը վախ և զգացել առաջին դաշտանի որը, 23-ը ամոթ, 4 հոգի ավելի զրգռվել են, իսկ 10 հոգին վոչ մի տպավորություն չեն ստացել. միայն մեկն է գրել՝ «յերբ դաշտանը հայտնվեց, շատ ափսոսացի, որ տղամարդ չեմ. յերանի տղամարդկանց. նրանք ազատ են այդ բանից»։

Մնացած հարցերին շատ քչերն են պատասխանել. մեծ մասն աշխատել է թաքցնել իրողությունը. որինակ, «ինչ տպավորություն և թողնում սեռական հարաբերությունը» հարցին պատասխանել են միայն 16 հոգի, որոնցից 6 հոգի հաճույք, 8-ը զզվանք, իսկ 7 հոգին գրում են՝ «վոչ մի տպավորություն» և զարմանալին այն է, որ զզվանք գրողը ամուսնացած է։ Այս կարելի յե բացատրել միայն սեռական զգացմունքի բացակայությամբ։

Պատասխան տվող կանանցից քչերն են վիժումներ և ծննդաբերություն ունեցել, այնպես որ դրանց թվի հիման վրա վորոշ յեզրակացություն անել անկարելի է։ Մի բան և միայն պարզվում, որ հղիությունն ու ծննդաբերությունը խանգարում են շատերի ուսմանը, և այս բանը պատճառ և դառնում շատ ու շատ կանանց հեռու մնալ սեռական կյանքից։

Վերջին յերկու հարցին ուշադրությամբ են վերաբերվել և համեմատաբար ավելի շատ անձինք են պատասխանել. ահա դրանք։

Ի՞նչ դեր և խաղում ձեր կյանքի մեջ սեռականը. այս հարցին պատասխանել են 21 կին, դրանցից 11 հոգին գրում են՝ «վոչ մի դեր չի խաղում». միայն 4 հոգին են գրում առաջնակարգ։ Այդ չորսից 2-ը գրում են՝ «սեռական կյանքի բացակայությունը տկարացնում է»։ Մնացածներից 5-ը գրում են՝ «յերկրորդական» և միայն մեկն և գրում՝ «անհրաժեշտ»։

Յերկրորդ հարցն այս է՝ «սեռական կյանքը չի դժբախտացնում ձեզ հասարակական ասպարիզում». այդ հարցին պատասխանել են 21 հոգի, վորոնցից 3 հոգի գրել են՝ «այո, դժբախտացնում է», իսկ մնացած 21 հոգին գրել են՝ «վոչ»։

Յեվ սրանով վերջանում է հարց ու պատասխանի թերթը։

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Մենք ծանոթացանք ուսանողության մի մասի սեռական կյանքի հետ. վերը բերած թվերը պարզ ցույց են տալիս այն աննկարագրելիությունը, որ կա յերիտասարդության սեռական կյանքի և նրա ֆիզիքական կազմվածքի մեջ։

Մենք տեսանք, թե վորքան վաղ է զարթնում շատերի սեռական զգացմունքը, վորքան վաղ սկսում են յերիտասարդներն իրենց սեռական կյանքը։ Մեծամասնությունը, դեռ չը հասած իսկական ֆիզիքական հասունության, ձգտում է հագեցնել իր սեռական ցանկությունը բնական և անբնական ճանապարհով։

Վոչ մի ֆիզիքական աշխատանք, վոչ մի մասավոր զբաղմունք այնքան էներգիա չեն պահանջում, վորքան խլում է սեռական մերձավորությունը կամ ոնանականությունն այնքան կարճ ժամանակամիջոցում։ Ոնանականությունից և սեռական բնական մերձավորությունից առաջ յեկած հոգնածությունն ավելի շատ է, քան միևնույն ժամանակում կորած դրված մասավոր զբաղմունքը կամ ֆիզիքական աշխատանքը, իսկ հայտնի է, վոր ուժից վեր մասավոր զբաղմունքը կամ ֆիզիքական աշխատանքը քայքայում են առողջությունը. իսկական ֆիզիքական հասունությունից առաջ ունեցած սեռական հարաբերությունը, կամ ոնանականությունը՝ նամանավանդ յերբ հաճախակի է, նույնպես քայքայում է մարդու առողջությունը։

Ինախոսությունն ասում է մեզ, վոր տղամարդի համար 25 տարուց և կնոջ համար 21 տարուց վաղ ունեցած հարաբերությունը կործանիչ ազդեցություն է թողնում առողջության վրա. իսկ մենք տեսանք, վոր 18-20 տարեկան հարաբերություն ունեցող տղամարդիկ ավելի շատ են, քան 25 տարեկանները. կան և այնպիսիները, վորոնք ավելի վաղ են սկսել իրենց սեռական կյանքը։

Չկա յերիտասարդ, վոր ոնանած չլինի. շատերը թաքցրել են և չեն ասել ճիշտը։

Մեր ստացած պատասխաններից յերևում է՝ թե վորքան սխալ հասկացողություն ունի յերիտասարդությունը սեռական հարցի մասին։ Սեռական մերձավորությունը մի միջոց է տեսակը բազմացնելու համար և վոչ լոկ հաճույք։ Սեռական ցանկությունն ամենևին պահանջ չէ և առողջության տեսակետից անպատճառ նրա բավարարումը անհրաժեշտ չէ։

Յեվ իր սխալ հասկացողության շնորհիվ յերիտասարդությունը շատ շուտ ընկնում է իր շրջապատի վատ ազդեցության տակ ու հասնում սեռական սանձարձակության։ Յերիտասարդությունը շատ վաղ սկսում է սեռական հարաբերությունը, ունենում է հարաբերություն շատ հաճախ, ունենում է հարաբերություն ամեն տեսակի կանանց հետ, մինչև անգամ կույս որիորդի հետ. շատերը մինչև անգամ պարծենում են իրենց կատարած գործով և գոնում են այդ շատ բնական։

Սեռական սանձարձակությունը հասել է այնտեղ, վոր որիորդն անգամ գրում է «այո, սեռական հարաբերություն ունեցել եմ, ինչպես մարդ, զգալով այդ պահանջը», կամ մյուս որիորդը գրում է՝ «սեռական հարաբերությունը գերադասում եմ ոնանականությունից և, փոխարեն ոնանականության, ունենում եմ մերձավորություն»։

Սեռական սանձարձակությունն այն աստիճանի է հասել,

վոր ամուսնացած անձինք չեն քաշվում ունենալ հարաբերություն տանից դուրս, մինչև անգամ պոռնիկների հետ։

Յեվ հետո, ինչու՞ զարմանալ, վոր տարածվում են վեներականախտերը. ամուսնացած յերիտասարդը, վարակվելով պոռնկից, վարակում է իր կնոջը և ուրիշներին, վորոնց թվում և կույս որիորդին. իսկ այդ ամուսնացած տղամարդի կինը ի վրեժ իր ամուսնու տալիս և վեներական հիվանդությունն ուրիշ տղամարդկանց։

Ահա մի շրջան, վորի մեջ ընկնում են սեռական սանձարձակները ու քայքայում են իրենց առողջությունը, քայքայում են ընտանիքը և գնում դեպի այլասերում։

Հին կյանքի ազդեցությունը դեռ մնացել է մեր յերիտասարդության վրա. կինը դեռ ընդունվում է վորպես հաճույքի առարկա և վոչ իրավազոր անդամ հասարակության։

Մեր ստացած պատասխաններից ակնհայտ է, վոր մեր յերիտասարդության մի մասի համար կինը ծնված է տղամարդի սեռական ցանկության բավարարման համար։

Սեռական ցանկությունն այնքան է կլանել մի քանիներին, վոր դրանցից 8 հոգի (Պետ. համալսարանի ուսանողներ) առաջարկում են՝ բաց անել Յերևանում ... հասարակաց տուն և այդ առաջարկությունն արված է լուրջ, առանց կատակի, նույն իսկ պաճառարանված էլ է։

Այդ ուսանողներից մեկն այնքան հեռու յի գնում, վոր առաջարկում է բաց անել մի այդպիսի տուն 300 մահճակալով (կարծես հիվանդանոց է) և գիտության վերջին խոսքի համաձայն, այսինքն՝ այդ տան մեջ սանիտարական բոլոր կանոնները կատարվեն և բժշկի հսկողության տակ կատարվի սեռական մերձավորությունը։

Մենք թույլ ենք տալիս մի վոքը կանգ առնել այդ հարցի վրա, վորովհետև շատ շատերից ենք լսում նման առաջարկ։

Միանգամայն համոզված, այդ անձինք պնդում են, վոր դրանով կարելի յի վերջ տալ դաղտնի և հայտնի պոռնկությանը և վեներական ախտերի տարածմանը։

Զարմանալի սխալ հասկացողություն և թյուր դատողություն։

Պոռնկատները կամ հասարակաց անները ամենախայտառակ և անբարոյական հիմարություններն են։

Արևմտյան Յեվրոպայում պոռնկատները չեն փրկում վեներական ախտերից և չեն վոչնչացնում գաղտնի պոռնկությունը, վորը անհելի չափերի յի հասել և տարածվել է, դեռատի աղջիկների ու մինչև անգամ յերեխաների մեջ։

Պոռնկատունը կնոջ ստորացման, կնոջ գարշելի շահագործման վատթարագույն վայրն է։

Ով կնոջը մարդ է հաշվում, յերբեք թույլ չի տա իրեն այդպիսի մի առաջարկ։

Պոռնկության դեմ կռվելու ավելի կատարյալ միջոցներ կան. վեներական ախտերի դեմ մաքառելու ավելի ուղիղ ճանապարհ կա, քան պոռնկատունը։

Այստեղ հնար չկա, տեղն էլ չե կանգ առնել այդ միջոցների վրա, միայն կասենք, վոր հասարակաց տուն բանալ առաջարկողը միայն սեռական սանձարձակը կարող է լինել, վորին հարկավոր են ստրուհիներ՝ բավարարելու իր վավաշոտ ցանկությունը։

Ի՞նչպես կռվել սեռական սանձարձակության դեմ։ Մենք գիտենք, վոր վաղաժամ հասունության պատճառն են՝ լպիրշ գրականությունը, սիրային ներկայացումները ու զրույցները տանը մեծերի կամ ընկերների շրջանում, ընտանեկան բարքերի անկումը և այլն. նույնպես և գիտենք, վոր ընտանիքը, ծնողները ի վիճակի չեն մաքառելու սեռական սանձարձակության դեմ, վորովհետև հատուկ պատրաստություն պետք է ունենալ դրա համար. ծնողներից շատ քչերն ունեն այդպիսի պատրաստություն։

Ապա ուրեմն դպրոցն է պարտավոր տանել այդ գործը. դպրոցն ի վիճակի յի դնելու այդ պայքարը լավ հողի վրա։

Ֆիզիկական և մտավոր զբաղմունքներն են, վոր թուլացնում են սեռական զգացմունքն ու ցանկությունը։

Շվեդիայում ոնանականներ չկան շնորհիվ այն բանի, վոր դպրոցական առողջապահությունը լավ է դրված։

Մանկավարժները ու դասախարակները պետք է հատուկ պատրաստականություն ունենան և այդ հարցի մասին զրույցներ անեն հենց 1-ին աստիճանի դպրոցներում, բայց միայն 10 տարեկանից բարձր աշակերտների հետ։

Դպրոցներում, ի հարկե 2-րդ աստիճանից սկսած, պետք է կազմակերպել ժուժկալության խմբակներ. ժուժկալությունը, այսինքն սեռական հարաբերության բացակայությունը, վնաս չի առողջապահության համար։

Աղջիկները ընութիւնից կրաւորական են. պետք է զարկ տալ այդ հակումին. իսկ յերիտասարդներին պետք է ներշնչել Գերցենի խոսքերը՝ հարգիր ընկերոջդ կնոջը, քրոջը և աղջկան, յեթե ուզում ես հարգեն քո կնոջը, քո քրոջը և աղջկան։

Դպրոցում ժուժկալութեան խմբակները զարկ կտան ֆիզիքական և մտաւոր պարապմունքներին, կը հեռացնեն զրականութեան միջից լպիրշ յերկերը, կը հսկեն իրենց անդամների սեռական կյանքի վրա, կը տարածեն իրենց անդամների մէջ սեռական հարցի մասին ճշգրիտ տեղեկութիւններ։

Սեռական հարցն ամենալուրջ հարցերիցն է, ուստի և պահանջում է լուրջ ուշադրութիւն. իսկ սեղանում դրանով ամենևին չեն զբաղվում, թողնելով ամեն ինչ բախտին։

Մենք ամենևին հավակնութիւն չունենք մեր առաջարկած միջոցները հաշվել լավագույնը։

Մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է զբաղվել այդ հարցով և իր միջոցն առաջարկել։ Չպետք է լռել, պետք է ասել, պետք է հայտարարել ամենուրեք, պետք է վոտքի կանգնեցնել մեր բոլոր ուժերը, վորպեսզի փրկվի յերիտասարդութիւնը այս կործանումից։

Ինքը յերիտասարդութիւնն էլ է զգում, վոր այդպես մնալ չի կարելի. ահա ինչ են գրել բանֆակի 2 ուսանողներ հարցման թերթի վերջում. բոլոր հարցերին յրջորեն պատասխանելուց հետո մեկը գրում է. «այս բոլորից հետո յես ցանկանում եմ բժիշկներից բարի և առողջապահական տեսակետից լավ խորհուրդներ լսել, յեթե վատ կողմեր ունեմ, աշխատեմ վերացնել»։ Իսկ մյուսը գրում է՝ «ընկեր բժիշկներ, ձեր այս ձևով տեղեկութիւններ հավաքելը շատ լավ է, միայն թե տեղեկութիւն հավաքելով չը պետք է բավականանաք, այլ պետք է միջոցներ ձեռք առնեք դրանց դեմ կռվելու համար. պետք է կազմակերպել հատուկ բժշկական գրույցներ (ուսանողների համար) և բացատրել՝ ինչպես կռվել զանազան յերևույթների դեմ կամ նման ցավերից ինչպես ազատվել. ինչպես պետք է վերջ տալ այս կամ այն ներքին կռիվներին» և այլն։

Թող լսեն այս խոսքերը դպրոցական գործիչներն ու բժիշկները և միջոցներ ձեռք առնեն, յեթե թանկ է նրանց համար մեր յերիտասարդության առողջությունը։

ՀԱՐՑՄԱՆ ԹԵՐԹ
АНКЕТНЫЙ ЛИСТ

Հայաստանի Հանրապետության յերիտասարդության սեռական կյանքի մասին

О половой жизни молодежи Республики Армении

Հ Ա Ր Ց	ՊԱՏԱՍԽԱՆ
1. Տարիք Возраст	18
2. Սեռ Пол	♂
3. Վոր դասակարգի մեջ և անցրել իր մանկությունը և պատանեկությունը В какой среде провел детство и юность: рабочей, крестьянской и т. д.	
4. Ծնողներից մեկն ու մեկը հիվանդ յեղել և հարբեցողությամբ կամ սիֆիլիսով Кто из родителей страдал алкоголизмом или сифилисом	մ մ
5. Զբաղմունք և քանի ժամ Род занятия и сколько часов	
6. Վորտեղ և սովորում և քանի ժամ Где учится и сколько часов в сутки	
7. Քանի տարի յե սովորում այդ դպրոցում Сколько лет учится в этом учебном заведении	
8. Ամուրի յե, թե ամուսնացած Холост или женат (замужная или девица)	ամուրի

9. Վոր հասակում յերևացին սեռական առաջին նշանները В каком возрасте появились первые половые признаки	
10. Սեռական առաջին նշանները յերևան յեկան ինքնաբերաբար թե արտաքին գործոնների ազդեցության տակ. որին. ընկերների, աղջիկների հետ միասին խաղի, թատրոնի և այլն Первые половые признаки появились самопроизвольно или под влиянием внешних факторов: например: товарищей, совместно с девицами игр, театра и т. д.	
11. Ձեռնաշարժությամբ պարապել է Занимался онанизмом	
12. Վոր հասակից սկսեց պարապել դրանով С какого возраста стал заниматься онанизмом	
13. Ինչ ազդեցություն է թողել առողջության վրա Какое влияние оказало на здоровие и в чем выражается	վոչ
14. Ինչ ազդեցություն է ունեցել դեպի միյուս սեռն ունեցած վերաբերմունքի վրա Как повлияло на отношение к лицам другого пола	
15. Ձեռնաշարժության պատճառները. ներքին դրդում կամ արտաքին ազդեցություն, ընկերներ, գրականություն, կինո և այլն Причины онанизма: внутренние побуждения или внешние: товарищи, литература, кино и т. д.	

16. Քանի տարեկան եր, յերբ յերևաց առաջին յերազախաբը На каком году появилась полюция	—
17. Յերազախաբը հաճախակի յեր, թե սակավ Полюции бывали часто или редко	
18. Ունեցել է սեռական հարաբերություն Имел ли половые сношения	այո
19. Քանի տարեկան եր առաջին հարաբերության ժամանակ На каком году произошло первое сношение	17
20. Սեռական հարաբերության պատճառները. ընկերները, հարբեցողություն, գրականություն և այլն, թե ինքնաբերաբար Причины половых сношений: товарищи, пьянство, литература или внутренние побуждения	
21. Առաջին հարաբերությունը պոռնիկի հետ եր, թե այլ կնոջ Первое сношение было с проституткой или с другой женщиной	—
22. Ինչ ազդեցություն թողեց դեպի ուրիշ սեռը տածած վերաբերմունքի վրա Какое влияние оказало на отношение к другому полу	5
23. Հետագայում ևս ունեցել է հարաբերություն և ում հետ՝ պոռնիկի թե այլ կնոջ Впоследствии также имел сношение и с кем: с проституткой или с другой женщиной	

24. Ինչ ազդեցություն է թողել հեղափոխությունը սեռական զգացմունքի վրա. պակասեցրեց, ուժեղացրեց թե մնաց առանց հետևանքի

Как повлияла революция на половое чувство: усилило, понизило или осталось без последствий

25. Սեռական մերձավորությունը ժամանակավոր կարճատև էր թե յերկարատև կամ թե բոլորովին պատահական

Половые сношения имели кратковременный, длительный характер, или же совершенно случайный

26. Յեթե մինչև այժմ հարաբերություն չև, ունեցել, ինչով և բացատրում այդ. բարոյականությամբ, սիրո կամ սեռական պահանջի բացակայությամբ, անհեռանկանով, վեներական հիվանդի յերկյուղով թե մի այլ պատճառով

Если до сих пор не было половых сношений, то чем обясняет это: моральными соображениями, отсутствием любви или половой потребности, страхом перед венерическими болезнями или другими причинами

27. Ունի՞ վորևև ազդեցություն առողջության վրա սեռական մերձավորության բացակայությունը

Влияет ли на здоровье отсутствие половых сношений и в чем выражается

28. Յերբ և ամուսնացել, քանի անգամ և վորքան ժամանակ և տևել յուրաքանչյուր ամուսնությունը

Когда вступил в брак, сколько раз и как долго длился каждый брак

29. Ինչու՞ մինչև այժմ ամուսնացած չև. չի կարող սիրել, նյութապես ապահով չև, ազատությունից չի ուզում զրկվել, թե ուրիշ պատճառ կա

Почему до сих пор не вступил в брак: не может любить, материально не обеспечен, не хочет лишиться свободы, или имеются другие причины

30. Սեռական վորպիսի մերձավորություն և գերադասում. ամուսնություն, յերկարատև սիրային, կարճատև, պատահական թե պոռնկային

Какую половую жизнь предпочитает: брак, длительно свободное любовное отношение, кратковременную связь, случайные встречи

31. Ամուսնությունից դուրս սեռային մերձավորություն ունեցել և ուրիշի հետ. յեթե այո, պատճառն ինչ և, ամուսնու տկարությունը և այլն

Имели сношение вне брака; если да, то по каким соображениям, болезнь супруга—ги и т. д.

32. Վեներական վորևև ախտով հիվանդացել և. վորով և քանի անգամ

Были ли больны венерическими болезнями. какими и сколько раз и в каком возрасте (лет)

33. Վարակել և վորևև մեկին վեներական ախտով. վորով, յերբ և քանի անգամ

Заразили-ли кого нибудь венерической болезнью, какой, когда и сколько раз

34. Բժշկվել և վեներական ախտից վերջնականապես, թե կիսատ

Вылечились ли от венерической болезни окончательно или не долечились

35. ՈւՇից և ստացել տեղեկություններ սեռական կյանքի մասին. ուսուցիչներից, ծնողներից, գրքերից, ընկերներից Откуда черпали сведения о половой жизни человека: от учителей, родителей, товарищей или из книг	
36. Գիտեյիք թե ինչ վտանգ և սպառնում առողջության սեռական անկարգ և անկանոն հարաբերությունը և ումից եք իմացել այդ. ուսուցիչներից ծնողներից, ընկերներից, գրքերից Знали-ли какая опасность угрожает здоровью от безпорядочных половых сношений: от кого узнали: от учителей, от товарищей, родителей	
37. Ունիք արդյոք սեռական գործարանների մի վարեվե ակարություն. տղամարդիկ՝ սեռական թուլություն, միզարգելություն, շաղանակաձև գեղձի յերկարատև բորբոքումն—ամորձիքի ակարություն, իսկ կանայք արգանդի, ձվախողովակի, ձվարանի, բժշկվում եք թե վոչ Имеется ли какая либо болезнь половых органов (у муж. половое безсилие, задержка мочи, хронич. простатит., воспаление яичка... у женщ.: воспаление матки, труб, яичников) лечитесь или нет	
38. Հետևյալ հարցերը հատկապես կանանց համար են Следующие дополнительные вопросы исключительно для женщин *Քանի տարեկան եք, յերբ յերևաց առաջին դաշտանը* На каком году появились первые месячныя	

39. Ինչ ազդեցություն թողեց՝ վախ, ամոթ, գրգռումն Как повлияли они: страх, стыд, возбуждение	
40. Ինչ տպավորություն և թողնում վրան սեռական մերձավորությունը. բավականություն, զզվանք, թե վոչ մի տպավորություն Какое впечатление оставляют половые сближения: удовольствие, отвращение или никакого впечатления	
41. Ունի յերեխաներ և քանի հատ, յեթե վոչ, յերեխա չունենալը վատ չի ազդում Есть ли дети и сколько: если нет, то отсутствие детей не влияет плохо на здоровье и психику	
42, Զավակ չունենալու համար միջոցներ գործ է դնում և ինչից դրդված. անտեսականից, առողջապահությունից, գեղեցկությունը չկորցնելուց, ժառանգական տխուր փոխանցելու վտանգից և այլն Принимаются ли меры против деторождения и по каким побуждениям: экономическим, эстетическим, опасением передать детям наследственную болезнь, желание жить безпрерывно половой жизнью	
43. Յեղել եք հղի և քանի անգամ Были ли беременны и сколько раз	
44. Վիժումներ յեղել են, քանի անգամ, արհեստական թե բնական Были-ли выкидыши, сколько раз, искуственные или естественные	

45. Ծննդաբերությունը ուժեղացրել է, թե պակասեցրել, սեռական զգացմունքը Роды усилили или уменьшили половое чувство	
46. Կերակրել է յերեխաներին, յեթե վոչ, պատճառն ինչ ել, տկար ել, գեղեցկությունից չզրկվելը Кормили детей, если нет то почему: отсутствие молока, болезнь, эстетические побуждения, экономические причины	
47. Մայրությունն ինչ ազդեցություն թողեց՝ յերջանկություն, վիշտ Как повлияло материнство: счастие, горе и т. д.	
48. Ինչ դեր է խաղում ձեր կյանքի մեջ սեռականը Какую роль играет половая жизнь в вашей жизни	
49. Չի դժբախտացնում ձեզ հասարակական կյանքի մեջ Не мешает ли вашему счастию в общественной жизни	

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Ա. ՄԵՍՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0151434